ՅՈՒՅԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՈՒՐԱԲԱՆԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԵՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾՈՒՐԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ

ԵՐԵՎԱՆ 2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՑՈՒՑԱԿ
ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԷՆ ՆԻՒԹԵՐԻ ԵՒ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ

ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՒ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՁԵՌԱԳՐԵՐ

ԿԱԶՄԵՑ՝ ՀԱՄՍԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ
Հեղինակային հրատարակություն
2008

ДУБЛЕТ

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

"MATENADARAN"
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

CATALOGUE OF TURKISH MATERIALS VRITTEN IN ARMENIAN LETTERS OF ARMENIAN MANUSCRIPTS AND TURKISH MANUSCRIPTS IN ARMENIAN LETTERS

A 7236 III

MANUSCRIPTS FROM "MATENADARAN" IN YEREVAN
AND
MOTHER SEE HOLY ST. ECHMIADZIN

Compled by Hasmik STEPANYAN

Yerevan 2008

ՀՏԴ 09:01
ԳՄԴ 76.11+91.9
Ց 911

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագիր մատենագետներ՝ Գևորգ Տեր-Վարդանյան
Արմեն Տեր-Ստեփանյան

Edited by Kevork TER-VARTANYAN
Armen TER -STEPANYAN

Ց 911 Ցուցակ հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նյութերի և հայատառ թուրքերեն ձեռագրերի: Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ձեռագրեր. - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2008.- 300 էջ

«Ցուցակն» ընդգրկում է 404 ձեռագրերի նկարագրություններ, որոնք մաս են կազմում հայ ձեռագրական ժառանգության: Այն իրենից ներկայացնում է մեր մշակույթի տարբեր բնագավառներն արտահայտող նյութեր, որոնք հիմնականում մինչ օրս պատշաճ ուշադրության չեն արժանացել հայատառ թուրքերենով գրված լինելու պատճառով: Ցուցակը թույլ կտա շատ ավելի որոշակի պատկերացում կազմելու հայատառ թուրքերեն ձեռագրական հարստության մասին և ուսումնասիրողներին հնարավորություն կընձեռնի լավագույնս օգտագործելու այս թանկարժեք սկզբնաղբյուրները, մղելով նրանց անհամար բացահայտումների ու նոր վերագնահատումների:

ԳՄԴ 76.11+91.9

ISBN 978-9939-53-185-4

© Հ.Ա. Ստեփանյան, 2008 թ.

Կազմը՝ Ավետարան, Վասպուրական, 14-րդ դար, մասնավոր հավաքածու

Այս աշխատանքը նվիրում եմ վաղամեռիկ սիրելի ծնողներիս՝

ԱՎԵՏԻՍ և ՆԱԶԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆՆԵՐԻ

վառ հիշատակին

Հասմիկ Ստեփանյան

Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում
այս գրքի հրատարակության հարգարժան հովանավորին, որը համեստորեն չցանկացավ
հրապարակել իր անունը

ԱՌԱՋԱԲԱՆ

15-18-րդ դարերում Օսմանյան կայսրությունում արևմտահայությունը սոցիալական ու ֆիզիկական անասելի հետապնդումների և բռնի ուծացման է ենթարկվել: Արդյունքում եղել է հայերի արտահոսք դեպի Ղրիմ, Լեհաստան, Ռումինիա, Հունգարիա, Ֆրանսիա և այլ երկրներ: Թուրքիայի, Պարսկաստանի հպատակության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների գլխին դամոկլյան սրի նման միշտ էլ կախված է եղել ֆիզիկական ոչնչացման վտանգը: Մեհմեդ 3-րդը (1595-1603) առանց մի լուրջ պատճառի հրամայեց ոչնչացնել 700 քրիստոնյա[1]: Հայտնի է, որ Սելիմ Առաջինի (1512-1520) հրամանով սպանվել են 40 000 շիիներ՝ հիմնականում քրդեր: Ջանայով իրականացնել «մեկ պետություն, մեկ ժողովուրդ, մեկ կրոն» գաղափարը՝ նա պատրաստվել էր բնաջնջել նաև կայսրության քրիստոնյաներին: Կրոնական առաջնորդին՝ շեյխ - ուլ- իսլամին հաջողվում է փոխել այդ որոշումը, համոզելով սուլթանին, որ Թուրքիայի համար շատ ավելի օգտակար կլիներ նրանցից յուրաքանչյուրից շնչահարկ վերցնել[2]: Որպեսզի մահմեդականը քրիստոնյա սպաներ՝ նրան ոչ մի պատճառ պետք չէր: Երբեմն թուրքաշատ վայրերում մահմեդականացած քրիստոնյաները երկու անուն ունեին, թուրքական և իրենց իսկականը: Տանն, ընտանիքներում իրենց լեզվով էին խոսում, իսկ դրսում՝ միայն թուրքերեն: Իսլամացված հայկական գյուղերում գաղտնի քահանաներ են հրավիրել, գաղտնի մկրտություններ, պսակ կատարել ու գաղտնի հանգուցյալ ճանապարհել:

Ահա մեր ժողովրդի թուրքախոս այս հատվածի համար է ծնունդ առել հայատառ թուրքերենը՝ որպես արևմտահայության ինքնապահպանման ու ուծացման դեմ պայքարի միջոց,

---

1 Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 10 (Այսուհետև տես՝ Գ.Դարանաղցի, Ժամանակագրութիւն...):
2 Լեո, Հայոց պատմություն, Եր., 1946, հ. 3, էջ 175:

հաղորդակցման միջոց ոչ միայն հայերեն չիմացողների, թուրքալեզու դարձածների, այլ նաև մասամբ հայերենին տիրապետողների համար, թուրքալեզու օտարների հետ:

Մահմեդականներն անսահմանափակ իրավունքներ ու առավելություններ ունեին «անհավատների» նկատմամբ: Օսմանյան կայսրությունում ապրող հայերի համար ահավոր սպառնալիք էր բռնի մահմեդականացումը: Հրաժարվելու դեպքում նրանք անասելի տանջանքների էին ենթարկվում, այրվում խարույկների վրա[3]:

Հայկական քնակչության վրա դրված էին մոտ 100 տեսակ հարկեր, որոնք հավաքվում էին ամենադաժան ձևերով: Եթե որևէ մեկն ուներ տաս որդի, նրանց բոլորից էլ հարկ էր գանձվում նույնիսկ եթե նրանցից որևէ մեկը պանդխտության գնար: Ամենուր ավազակներ էին, ամենուր թալան, կոտորած ու բռնություն էր,- գրում է Սիմեոն Լեհացին[4]:

Թուրքական ֆեոդալները հանդուրժում էին քրիստոնյաներին և հրեաներին լոկ այն բանի համար, որ նրանցից անհամեմատ մեծ օգուտ ունեին, քան իրենց հավատակիցներից: Նրանց թույլ էին տալիս ապրել ճիշտ այնպես, ինչպես դա արվում էր ոչխարների ու մեղուների համար՝ նրանց կաթի և մեղրի դիմաց,- գրում է 17-րդ դարի ֆրանսիացի հեղինակ Միշել Լը Ֆեբռը[5]:

Բազմաթիվ ուսումնասիրողներ են անդրադարձել Օսմանյան կայսրության հպատակության տակ գտնվող ոչ թուրք ազգերի իրավազուրկ վիճակին, նրանց դեմ ուղղված տարբեր հալածանքներին: Բազմաթիվ ձեռագիր աղբյուրներ կան քրիստոնեական եկեղեցիներն ավերելու, թալանելու, մզկիթների վերածելու կամ մի ժողովրդից այն վերցնելով՝ մյուսին հանձնելու մասին: Երբեմն, երբ մզկիթների շինարարության համար քրիստոնյաներից գանձվող գումարները չեն բավարարել, հրաման է արձակվել քրիստոնեական եկեղեցիների ավերման մասին: Համայնքների առաջնորդները եթե հասցրել են, ապա լրացուցիչ գումարների շնորհիվ երբեմն կարողացել են փրկել այս կամ այն եկեղեցին ավերումից, կամ՝ շարունակել դրանց վերակառուցումները: Երբեմն եկեղեցիները քանդվել են այն պարզ պատճառով, որ իբր թե մի վայրում երկու եկեղեցուց ավելին ունենալն արգելված է եղել:

Մի քիչ այլ է եղել հայերի վիճակը Կ.Պոլսում, ուր հայերը համեմատաբար ավելի ազատ են զգացել: Այստեղ նրանք անհամեմատ քիչ են ենթարկվել ֆիզիկական ոչնչացման և տեղահանությունների: Այս հանգամանքի շնորհիվ Կ.Պոլիսը դեպի իրեն է գրավել կրոնական ու մշակութային բազմաթիվ գործիչների ոչ միայն Արևմտյան, այլ նաև Արևելյան Հայաստանից:

Կ.Պոլիսը համախմբել է բազմաթիվ հանրահայտ հայերի, որոնք իրենց գործունեությամբ նշանակալի ավանդ են ունեցել Օսմանյան կայսրության գրականության, մշակույթի, գիտության, առևտրի, արդյունաբերության և կյանքի այլ բնագավառների զարգացման մեջ:

---

3 Գրիգոր Դարանաղցի, Ժամանակագրութիւն... էջ 15:
4 Սիմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, Վիեննա, 1936, էջ 153-154: Տղահավաքների մասին տես՝ Արտակ Շաքարյան, «Արյան հարկը» Օսմանյան կայսրությունում. Դաշիրմե: Երևան, 2006թ.:
5 Michel Le Febre, Estat présent de la Turque, Paris, 1675, p. 217; Տես՝ Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 233:

1453 թվականի մայիսին սուլթան Մեհմեդ Ֆաթիհ (նվաճող) 2-րդը գրավեց Կոստանդնուպոլիսը: Իր նոր մայրաքաղաքի վերաբնակեցման նպատակով Սուլթանը բազմաթիվ հայերի տեղահանեց ու բերեց Կ.Պոլիս: Նրա նպատակն էր ոչ հունական խավի՝ հայերի միջոցով քաղաքի բյուզանդական բնակչությանը հակակշիռ ստեղծել: Կ. Պոլսի գրավումից հետո սուլթանական հատուկ հրովարտակով հունական համայնքի (rum milleti) պատրիարք էր նշանակվել Կենարիոսը: Հունական համայնքը միավորում էր ոչ միայն հույներին, այլև ուղղափառ նկեղեցուն պատկանող բոլոր մյուս հպատակներին ևս՝ բուլղարներին, սերբերին, մոլդավներին, վլախներին և ընդհանրապես կայսրության ամբողջ քրիստոնյա բնակչությանը:

Մայրաքաղաքի գրավումից մի քանի ամիս անց, աշնանը, Կ.Պոլիս հատան հայ վերաբնակների առաջին խմբերը: Սուլթան Մեհմեդ Ֆաթիհ 2-րդի և նրան հաջորդած տիրակալների օրոք Կ.Պոլիս վերաբնակեցրին հայեր՝ տեղահանված Անկյուրայից, Կաֆայից, Նվրոկիայից, Ակնից, Կիլիկիայից, Արաբկիրից, Բաբերդից, Տրապիզոնից և բոլոր այն տարածքներից, որ գրավվել էին թուրքերի կողմից: Առանձնապես մեծ թվով հայեր բերվեցին Կ.Պոլիս Ջալալիների ապստամբության շրջանում 16-17 դդ, և նրանց թիվը հասավ ավելի քան 50 000-ի: Մեհմեդ 2-րդը վտանգավոր և անիմաստ համարեց քրիստոնյա բնակչության նման մեծ ուժի, իշխանության կենտրոնացումը մեկ անձի՝ այն է հունական պատրիարքի ձեռքում:

Կ.Պոլսի գրավումից հետո արևմտահայության կյանքում ամենամեծ իրողությունը սուլթան Մեհմեդ 2-րդի հրովարտակով 1461 թվականին Կ.Պոլսում հայկական Պատրիարքական Աթոռի հաստատումն էր: Բուրսայից բերված Հովակիմ եպիսկոպոսը դարձավ առաջին Կ.Պոլսո պատրիարքը (1461-1478 թվականներին): Նրա հոգևոր, քաղաքական իշխանությունը տարածվում էր ոչ միայն հայ լուսավորչական հայերի, այլև վրացի, աղվան, ասորի, ղպտի, հաբեշ միաբնակ ուղղափառների վրա: Այս և հունական համայնքի բաժանումը հիմնվում էր պարզապես դավանանքի տարբերության վրա, առանց հաշվի առնելու ազգային առանձնահատկությունները, քանզի Ղուրանը ժողովուրդներին բաժանում է ոչ թե ցեղային, այլ ըստ կրոնական առանձնահատկությունների: Կ. Պոլսի գրավումից 40 տարի անց հաստատվեց նաև հրեական համայքը, որի կրոնական առաջնորդը՝ խախամ բաշին, բոլոր տեսակետներից հավասարազոր իրավունքներ ուներ վերոհիշյալ հույն և հայ պատրիարքների հետ: Այս մասին են վկայում թուրք պատմաբաններ Ահմեդ Ռեֆիկը, Ա.Ուբիչինին[6]:

Կրոնական այս երեք համայնքների համակարգն ավանդաբար մնաց հետագա դարերի ընթացքում՝ սուլթանների կողմից փորձելով ծառայեցնել իրենց նվաճողական նպատակներին և մյուս կողմից՝ նրանց օտար պետությունների ազդեցություններից հեռու, իլու հնազանդ պահելու համար:

---

6 Միրուսի Հ. (Ճոլոլյան), Պոլիս եւ իր դերը, 1965, Բեյրութ, էջ 204: Տես նաև՝ А.Убичини и П.де Куртейль, Современное состояние Оттоманской империи, С.Петербург, 1877, стр. 164.

Ուրիշ ի՞նչ նպատակ էր հետապնդում Պատրիարքարանի հաստատումը Կ.Պոլսում:

Ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանն ուներ մեկ ընդհանուր հոգևոր հովիվ՝ Ամենայն Հայոց կաթողիկոսը, որի աթոռանիստը դարձել էր ս.Էջմիածինը, ուր 1441 թվականին Հայրապետական Աթոռը տեղափոխվել էր Կիլիկիայից: Քանի որ Էջմիածինը գտնվում էր Պարսկաստանի ազդեցության ներքո, ուստի Կ.Պոլսում հիմնելով Պատրիարքական Աթոռ, որը ենթարկվում էր սուլթանին՝ վերջինիս պիտի ենթարկեր նաև հայ ժողովրդի բուրքական տիրապետության տակ գտնվող բնակչությանը: Պատրիարքը ոչ միայն հոգևոր առաջնորդ էր, այլև հայերի ներկայացուցիչը կայսրությունում: Պատրիարքը պատասխանատու էր Բ.Դռան մոտ (Բարձր Դուռ), պալատում, հայերի համար: Կ.Պոլսի հայ պատրիարքարանն ուներ որոշակի իրավունքներ և պարտականություններ սուլթանական պալատի նկատմամբ: 1764 թ. հունիսի 3-ին հայոց պատրիարք Գրիգոր Պասմաճյանին տրված «բերաթ»ի (հրովարտակ) համաձայն, որն իր տեսակի մեջ ամենաընդարձակներից էր, ասվում էր. «Կ.Պոլսի պատրիարքն իրավունք ուներ որոշելու Անատոլիայի և Ռումելիի հայ ազգաբնակչության հոգևոր խնդիրները, ընտրելու կամ վտարելու առաջնորդներին, թեմերի ղեկավարներին: Պատրիարքին էր պատկանում ամուսնությունների, բաժանությունների և քաղաքացիական այլ գործերում որոշիչ դերը: Պատրիարքն էր կարգավորում եկեղեցապատկան հողերի, կտակների խնամակալության խնդիրները: Նա ուղարկում էր նվիրակներ՝ հավաքելու եկեղեցական տուրքերը, նվերները: Դավառներից ստացված բողոքները հանձնում էր սուլթանին կամ նրա գրասենյակին: Պատրիարքը պատժում կամ երբեմն հասնում էր նրան, որ պատժել էր տալիս «մոլորյալ հայերին», որոնք հերետիկոսության ուղին էին բռնել: Պատրիարքն էր իրավունք տալիս մայրաքաղաքում եկեղեցիներ, վանքեր կառուցելու համար, ինչպես նաև դպրոցների, նախապատրաստական դասարանների, տպարանների բացման, գրքերի հրատարակության համար»[7]:

Հայ պատրիարքները թեև օգտվում էին բազմաթիվ առավելություններից, սակայն հարկերից ու սուլթանին տրվող տուրքերից ազատված չէին: Նշանավոր հայագետ Ղուկաս Ինճիճյանը փաստում է, որ սուլթանական գանձարանին տրվող նվերներն ու տուրքերը որոշված էին հրամանագրով[8]:

Տուրքերից բացի պատրիարքը պարտավոր էր տարբեր առիթներով սուլթանին թանկարժեք նվերներ մատուցել[9]: Քանի որ Կ.Պոլսի պատրիարքարանն արևմտահայության համար իրենից ներկայացնում էր ոչ միայն հոգևոր, այլև քաղաքական իշխանություն և տնօրինում էր նյութական մեծ կարողության, ուստի միշտ էլ սուր պայքար է մղվել պատրիարքական աթոռին տիրանալու

7 Հայ ժողովրդի պատմություն, հ. 5, Եր., 1974, էջ 302-303, ինչպես նաև Фадеева И.Л., Официальные доктрины в идеологии и политике Османской империи (Османизм-панисламизм) XIX - начало XXвв., М., 1985, с. 7-9.

8 Ինճիճեան Ղուկաս, Աշխարհագրութիւն չորսից մասանց աշխարհի, Վենետիկ, հ. 5, էջ 117 (այսուհետև տես՝ Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն...):

9 Մ.Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր հ. 10716, Թուրքիայի պատմություն, էջ 25բ (այսուհետև տես՝ ՄՄ, ձեռ...):

համար: Պատահական չէ, որ երբեմն աշխարհական մեծահարուստ ամիրաները պատրիարք չէին ընտրում ու իրենք էին համարվում աթոռակալ և օգտվում էին պատրիարքին տրվող բոլոր իրավունքներից: Բնականաբար սուլթանական կառավարությունը շահագրգռված էր, որպեսզի հաճախակի փոխվեին պատրիարքները: Յուրաքանչյուր նման դեպքում կառավարությունը որոշակի գումար էր գանձում: 1600 թվականից մինչև Հովհաննես Կոլոտի պատրիարք դառնալը (1715 թ.), 115 տարվա ընթացքում Պատրիարքական Աթոռ են բարձրացել 55 դեմքեր՝ գրեթե 60-70 անգամ, միջին հաշվով հազիվ 2-3 տարի պատրիարք մնալով: Ավելին, նույն անձը կարողացել է մի քանի անգամ զբաղեցնել պատրիարքական աթոռը: Այսպես օրինակ՝ Կարապետ Կեսարացին՝ 5, Դավիթ Արևելցին՝ 4, Հովհաննես Խուլը՝ 3 անգամ և այլն[10]:

Պատրիարքարանը որպեսզի սուլթանական գանձարանին մուծեր հարկերն ու նվերները, ստիպված էր իր հեթին տարբեր հարկեր հավաքել թուրքահպատակ հայերից: Այսպես օրինակ, յուրաքանչյուր հոգևոր առաջնորդ հօգուտ պատրիարքարանի վճարում էր 600 դուռուշ, Անկարայից՝ 200, նույնքան Թոքատից, Դիարբեքիրից, Ուրֆայից, Սեբաստիայից, Տրապիզոնից, Գյումուշխանեից և այլն[11]:

Այնուամենայնիվ, չնայած բոլոր հետապնդումներին ու մեծ տուրքերին, պատրիարքարանը կարողացավ խոշոր դեր խաղալ արևմտահայերի քաղաքական ու մշակութային կյանքում, հաճախ հանդես գալով որպես հայերի միակ պաշտպանն ընդդեմ սուլթանական տերության կողմից հետևողականորեն շարունակվող կամայականությունների ու բռնությունների: Կ.Պոլսի հայ պատրիարքարանի գոյությունը վկայում էր ոչ միայն մայրաքաղաքում, այլև ողջ կայսրությունում հայ համայնքի ազդեցության մասին: Դրան մեծապես նպաստում էր հայ համայնքի տնտեսապես ակտիվացումը՝ հայերի գործունեությունը որպես առևտրականներ, արհեստավորներ, սեղանավորներ:

Հայտնի է, որ 17-րդ դարից Թուրքիայի արտաքին և ներքին առևտուրը գտնվում էր հիմնականում հայերի և հույների ձեռքում: «Հայերը,-գրում է անվանի հայազգի պատմաբան Մուրադջա Դ' Օհսընը,-շատ հաճախ են իրենց նվիրում առևտրին: Հենց նրանք և ոչ թե մահմեդականներն են հանդիսանում հարուստ քարավանների կազմակերպիչները: Ամեն տարի հայերն ուղևորվում են Ասիայի տարբեր շրջանները, որպեսզի տարածեն այնտեղ աշխարհի չորս կողմերի ապրանքները[12]: Հայերն իրենց առևտուրն իրականացնում էին չափազանց ծանր պայմաններում, քանի որ «Թուրքիան լեցուն էր ավազակներով, որոնք մեծ խմբերով թափառելով ճանապարհներին՝ սպասում էին վաճառականներին: Երբ նրանք հանդիպում էին հարուստ վաճառականների, ապա թալանում էին նրանց ու շատ հաճախ՝ սպանում»,-վկայում է

10 Սիրունի, էջ 55:
11 Իմճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, հ. 5, էջ 117:
12 D' Ohsson M., Tableau Général de l'Empire Ottoman, Paris, 1790, v. 4, p. 204.

Ժ.Տավերնիեն[13]: Դեռևս 18-րդ դարում հայ վաճառականների նավերը խարիսխ էին գցում մի կողմից Եվրոպայի ափերին, իսկ մյուս կողմից՝ հասնում էին մինչև Հնդկաստան: Ղ. Ինճիճյանը գրում է, որ Եվրոպայում ձեռք բերված հիմնական ապրանքները՝ դրանք Ռուսաստանի մորթիներն ու մուշտակներն էին, որոնք տարեկան հսկայական շահ էին ապահովում: Դրանց փոխարեն վաճառականները տալիս էին ոչ միայն իրենց ապրանքը, այլև փոխում մարգարտի հետ: Անգլիայից ու Գերմանիայից գնում էին մահուդ, մետաղե իրեր, արհեստագործական առարկաներ: Ֆրանսիացիր պատմաբան, դիվանագետ Մուրաջա Դ'Օհսոնի վկայությամբ համաշխարհային պատերազմից առաջ Ֆրանսիայի հետ նրանց առևտուրը գերազանցում էր մյուս երկրների հետ առևտրին, որտեղից բերում էին մահուդ, ոսկի, արծաթ, ոսկե ու արծաթե թելեր՝ հագուստեղեն կարելու համար, ժապավեններ ու նուրբ գործվածքներ, իրեր երկաթից և այլն...[14]:

Օտար երկրների հետ առևտուրը լոկ տնտեսական բնույթ չէր կրում: Գործի բերումով վաճառականներին անհրաժեշտ օտար լեզուների իմացությունը, բնական խելքը և փորձը անկասկած էական դեր են խաղացել Օսմանյան կայսրությունում եվրոպական կացութաձևի ու եվրոպական մտածելակերպի ներթափանցման գործում: Նրանք ժամանակի առաջադեմ գաղափարների կրողներն են հանդիսացել և մատչելի են դարձրել հարևան երկրների արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու մշակույթի առաջընթացի ներթափանցումը կայսրություն:

Այս ամենը չէր կարող իր ազդեցությունը չունենալ հետամնաց Օսմանյան կայսրության կյանքի վրա: Թուրքական պետության մեջ հայերի ծառայություններին են նվիրված մի շարք ուսումնասիրողի աշխատությունները[15]:

Եթե առևտուրը, դիվանագիտական ծառայությունը որոշ հայերի մենաշնորհն էր, ապա մնացած հայերի մեծ մասը արհեստներով էին զբաղվում: Սա պատահական հանգամանք չի, քանի որ, ինչպես նշում է բուլղար գիտնական Ն. Թոդորովը, մինչև 18-րդ դարի վերջը «...տիրապետող ժողովուրդը գտնվում էր արտադրող ուժերի ընդհանուր զարգացման շրջանակներից դուրս, և այս հանգամանքն իր դրոշմն է թողել Օսմանյան կայսրության ողջ սոցիալ-քաղաքական կյանքի վրա»[16]: Հայերը կարևոր տեղ էին զբաղեցնում արհեստների ու առևտրի մեջ: Նրանք մահուդագործներ էին, մետաքսագործներ, ոսկերիչներ, շղարշագործներ, դաջեզործներ, բրդագործներ, մանուֆակտուրայի մանր վաճառականներ, գուլպայագործներ, ժամագործներ, դերձակներ, մորթեզործներ, դարբիններ և այլն,- գրում է պոլսահայ բանասեր Հարություն Մրմրյանը[17]: Յուրաքանչյուր արհեստ ներկայանում էր իր արհեստագործական խմբով՝ էսնաֆով:

13 Հայ ժողովրդի պատմություն, հ. 4, էջ 291:
14 Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն, հ. 5, էջ 5:
15 Çark Y.G., Türk Devleti Hizmetinde Ermeniler 1453-1953, İstanbul, 1953, s. 135- 145.
16 Тодоров Н., Балканский город ХУ-XIX веков, М., 1976, с. 410.
17 Մրմրեան Հ., Թուրքահայոց հին վաճառականութիւնը և վաճառականները, Կ.Պոլիս, 1910, էջ 17:

Միայն Կ. Պոլսում գործում էին 65 էսնաֆներ: Այս արհեստներին պետք է ավելացնել նաև նրանց, ովքեր զբաղված էին շուկաներում, խաներում: Այն է՝ հացթուխները, գինեգործները, փորագրիչները, քաթանագործները, ջուլհակները, որոնք բուրդ, մետաքս ու գործվածք էին մշակում, գլխարկագործները, փականագործները, ձևարարները: Հարկ է թվարկել նաև գրավաճառներին, գրագիրներին, վարսավիրներին, բաղնեպաններին, դեղագործներին, բժիշկներին, խոհարարներին, հնավաճառներին, կոշկակարներին, ներկարարներին, արդուկողներին, պանդոկատերերին, կլայեկողներին, բրուտներին, ոսկեկարող դերձակներին և այլոց[18]: 19-րդ դարից արհեստակցական միությունները ավելի ակտիվորեն լծվեցին ազգային ինքնավարության գործերին:

Օսմանյան կայսրությունում, մասնավորապես Կ.Պոլսում մեծ հեղինակություն էին վայելում ամիրայական տոհմերը[19], որոնք խոշոր դեր են խաղացել երկրի տնտեսական կյանքում: Դա Տյուզյանների, Յուսուֆյանների, Տատյանների, Նորատունկյանների, Սերվերյանների, Ճեզաիրլյանների, Խորասանճյանների, Միրիճանյանների, Փիշմիշյանների, Արփիարյանների, Հոպանյանների, Չերազյանների, Պալյանների և այլոց ամիրայական տոհմերն էին[20]: Երկար տարիներ ամիրաների ձեռքում էին կենտրոնացած պալատական փողերանոցը ու վառոդարանը, զինապալատը: Ճեզաիրլյան Մկրտիչ ամիրան երկար տարիներ գլխավորել է Կ.Պոլսի մաքսատունը, որի ղեկավարության տակ նավահանգստում աշխատել են 20 000 հայեր՝ հիմնականում գավառներից եկած: Մեզ են հասել մեծ հետաքրքրություն ներկայացնող «Մաքսատան սակագների մասին» երկու արժեքավոր հայատառ թուրքերեն ձեռագրեր[21]: Նպատակ չունենալով ուսումնասիրել հայ ամիրայական տների դերը, այնուամենայնիվ հարկ է նշել, որ նրանք իրենցից ներկայացնում էին Օսմանյան կայսրությունում նոր սաղմնավորվող բուրժուազիան, դիվանագիտությունը: Սոցիալ-քաղաքական գործունեության առումով այն արտահայտվել է ինչպես առաջադիմական, այնպես էլ որոշ բացասական տեսանկյունից:

Կ.Պոլիսը հայերի համար եղել է նաև այն քաղաքը, ուր ձգտում էին հազարավոր պանդուխտներ Արևմտյան Հայաստանի գավառներից, հուսալով ապրուստի միջոցներ հայթայթել, խուսափել ջարդերից: 18-րդ դարում այս աղքատ, սովյալ պանդուխտների թիվը հասավ 100

---

18 Պողոս Կաղզվանցի, Ժամանակագրություն, էջ 337-338 և էջ 554-555 (տես Հակոբյան Վ.Ա., «Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դդ., Եր., հ. 2, 1956), ինչպես նաև Մատենադարան, ձեռ. 10069, էջ 61ա: Տես նաև՝ Աբրահամյան Վ.Ա., Արհեստները Հայաստանում, Եր., 1956, էջ 252:

19 Ամիրա (արաբական ամիր բառից) - միայն սուլթանական պալատում պաշտոնավարող (բանկիրներ, վաճառականներ, պալատական ոսկերիչներ ու ժամագործներ, վառոդապետներ, բժիշկներ, ճարտարապետներ, նկարիչներ և այլ) հայերին տրվող շատ բարձր կոչում:

20 Զարդարեան Վ., Հուշարձան, հ. 1, Կ.Պոլիս, 1910: Նույն հեղինակի՝ Ցիշատակարան, Կահիրե, 1939, ինչպես նաև՝ Ազատեան Թ., Ակն և ակնցիք, Կ.Պոլիս, 1943: Տես նաև՝ Մենեվիշեան Գ., Ազգաբանութիւն ազնվական զարմին Տյուզեանց, Վիեննա, «Հանդէս ամսօրեայ», 1890, էջ 209-216, 230-234: Pamukciyan K., Noradunkyan Ailesi, "Tarih ve Toplum", 1988, N 49, s. 40-42; Pamukciyan K., Kayserili Hassa Mimar Ohannes Amira Serveryan "Tarih ve Toplum", 1987, N 46, s. 23-29:

21 Օշական Հ., Համայնապատկէր արեւմտահայ գրականութեան, հ. 1, Երուսաղեմ, 1945, էջ 174: Տես նաև՝ ՄՄ, ձեռ. 8015, 8016: Դրանք վերաբերում են հիմնականում Ռուսաստանի հետ առևտրին:

հազարի: Նրանք Ստամբուլ էին գալիս իրենց սովորություններով ու ավանդույթներով, իրենց բարքաոներով, բանահյուսությամբ, տարբեր՝ մայրաքաղաքի հայ համայնքից: Արևմտահայ իրականությունում սկսել էին խորանալ դասակարգային հակասությունները: Ամիրայական իշխանությունը գլխավորում էր ազգային-հասարակական կյանքը, իսկ նրանց ղեկավարության տակ աշխատող պանդուխտները չէին կարող հավակնել անգամ ազգային գործերի մասնակցությանը: Օգտվելով որոշակի ազդեցությունից, ամիրաները մրցում էին միմյանց հետ ոչ միայն տնտեսական, այլև մշակութային գործունեության ասպարեզում[22]: Վերոհիշյալ երևույթները նպաստեցին, որ 17-րդ դարի սկզբից արդեն Կ.Պոլիսը դառնա հայ մշակութային կենտրոններից մեկը: Պոլսահայերի մշակութային կյանքի զարգացումը հիմնականում պայմանավորված էր դպրոցների, գրահրատարակչության, մանրանկարչության, ճարտարապետության և իհարկե գրականության զարգացմամբ:

Առաջին դպրոցները Ստամբուլում ստեղծվել էին 17-րդ դարում, սակայն երկար չէին գործել: Առաջին ամենօրյա դպրոցը, ուր 100 դպրոցականներ էին սովորում՝ հիմնվել էր Կ.Պոլսի Հովհաննես Կոլոտ պատրիարքի կողմից 1719 թվականին Սկյուտարում: Դպրոցում դասավանդում էր ինքը՝ Պատրիարքը, մշակութային գործիչ, բանաստեղծ Պաղտասար Դպիրը, թարգմանիչ Ղուկաս Խարբերդցին, Գասպար Դպիր Սեբաստացին և ուրիշներ: Այս դպրոցում են կրթվել բազմաթիվ հոգևոր ու մշակութային գործիչներ, այդ թվում նաև Հակոբ Նալյան պատրիարքը:

Հովհաննես Կոլոտը (1678-1741) համարվում է Կոստանդնուպոլսի գրական դպրոցի հիմնադիրը, որի շնորհիվ 18-19-րդ դարերում հայ գրականությունը անսահման հարստացավ: Հոգևոր դաստիարակությանը զուգահեռ աշակերտները բազմակողմանի կրթություն էին ստանում և փորձում իրենց ուժերը պոեզիայում, արձակում, զբաղվում էին երաժշտությամբ: Հայտնի մանկավարժ-պատրիարքը հիմնադրեց Կ.Պոլսում առաջին մատենադարանը[23]: 1741 թվականին Հակոբ Նալյանը (1706-1764) համաձայն իր ուսուցչի՝ Հովհաննես Կոլոտի կտակի, նրա մահվանից հետո դարձավ Կ.Պոլսո հայ պատրիարք[24]: Նույն տարին նա Սկյուտարից դպրոցը տեղափոխում է Գումգափու, որը հայտնի է դառնում որպես Մայր դպրատուն: 18-րդ դարի վերջին մեծ

22 Ամիրաները բացում էին եվրոպական տիպի աշխարհիկ դպրոցներ՝ անվճար, ժամանակակից ծրագրերով ու փորձերի համար նախատեսված գիտական կաբինետ-լաբորատորիաներով: Այս դպրոցներում սովորում էին եվրոպական լեզուներ: Բացվում էին օրիորդաց վարժարաններ և մասնագիտական դպրոցներ: Մինչև 19-րդ դարի կեսերը 151 հայկական դպրոցներում սովորում էին 2 000-ից ավել երեխաներ: Ունևոր ընտանիքների երեխաները սովորաբար կրթություն էին ստանում տանը կամ մասնավոր դպրոցներում, Եվրոպայում: Ամիրաները բացում էին հիվանդանոցներ, ուր աշխատում էին եվրոպական համալսարաններում մասնագիտություն ստացած հայ բժիշկները: Հասարակության հարուստ խավերը բարեգործական միություններ էին կազմում, հիմնում տպարաններ, ֆինանսավորում հրատարակություններ ու թատերական մերկայացումներ, բացում որբանոցներ, ծերանոցներ և այլն:

23 Այսօր՝ Գալաթայի (թաղամաս Ստամբուլում) Ազգային մատենադարանը:

24 Հակոբ Նալյանն առաջին անգամ Կ.Պոլսի պատրիարք է եղել 1741-1749 թվականներին: 1749-1752 թվականներին ընտրվել է Երուսաղեմի պատրիարք: Վերադառնալով Կ.Պոլիս, 1752թ. երկրորդ անգամ դարձել է պատրիարք և կառավարել մինչև իր մահը՝ 1764 թվականը: Հակոբ Նալյանը հեղինակ է բազմաթիվ հայատառ թուրքերեն տաղերի, որոնք հայ տաղարաններում տեղ են գտել «Նիհատի» ծածկանվան տակ: Տես նաև՝ Գ.Քամսարաքճեան, Յակոբ Նալեան Պատրիարք 1706-1764. կեանքը, գործերը եւ աշակերտները, Ստամբուլ, 1981:

հեղինակություն էր վայելում Հակոբ Մծբնա հայրապետի դպրոցը, ուր իրենց կրթությունն են ստացել հայ մշակույթի մի շարք հայտնի գործիչներ:

Այս շրջանում Կ.Պոլսի հայկական մթնոլորտում իրենց հայաղավ շարժումն էին սկսել Հռոմի կաթոլիկական հավատքի տարածման մի խումբ ջատագովներ, «Պրոպագանդա» գոլեժի քարոզիչներ, որոնք հայերի միջոցով ձգտում էին Հռոմի ազդեցությունը տարածել Օսմանյան կայսրությունում: Դրանք մի քանի լեզուներ տիրապետող, զարգացած կղերականներ էին, որոնք Կ.Պոլսի կաթոլիկական երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ միասին կոչված էին ազդեցության գոտիների բաժանելու Օսմանյան կայսրությունը: Ուսումնական զարգացման քողի ներքո նրանք ոչ մի միջոցի առջև կանգ չէին առնում՝ հասնելու համար իրենց հեռահայաց նպատակներին: Այս քաղաքականության առաջին զոհերը քրիստոնյա ժողովուրդներն էին, նախ և առաջ՝ հայերը: Այսպիսի գրագիտությամբ, նյութական, դիվանագիտական հզորությամբ օժտված ուժի դեմ պայքարի տարբեր ձևեր հանդես եկան: Այն է՝ բացահայտ պայքար, բանադրանքներ ու պատիժներ նրանց ու կաթոլիկությանը հարողների նկատմամբ: Կ.Պոլսի պատրիարքները տարբեր կերպ էին պատկերացնում ու կազմակերպում այն: Հովհաննես Կոլոտ պատրիարքը գիտակցելով այդ քարոզչության ողջ ուժը, գնահատելով օտար քարոզիչների զարգացվածության բարձր մակարդակն ու դրանով նաև պայմանավորված վտանգավոր առավելությունը կիսագրագետ հայ կղերականության նկատմամբ՝ իբրև խորաթափանց քաղաքականություն սկսեց վարել: Նա գտնում էր, որ պետք է զարգացած կղերականությամբ, մտավորականությամբ ու կիրթ համայնքով փոխազդել այս հարձակմանը: Նրա հիմնադրած գրական, թարգմանական դպրոցը, կաթոլիկների նկատմամբ չափավոր, հանդուրժողական քաղաքականության վարումը լավագույն հակադարձումը կարող էր լինել հայերին իրենց գաղութարարական նպատակների համար օգտագործող կաթոլիկ երկրների ծրագրերին դիմակայելու գործում:

Նույն այդ շրջանում Զաքարիա Կաղզվանցի Փոքուզյան (1719-1799թթ.) պատրիարքի (Կ.Պոլսի պատրիարք է եղել 1773-1781թթ.) ջանքերի շնորհիվ մայրաքաղաքում բացվել են առաջին թաղային, ծխական վարժարանները: Դրանցից անդրանիկը Գումգափու թաղի Ֆրչրճը փողոցի մեջ Շնորհք ամիրայի մեկենասությամբ բացված դպրոցն էր: Այնուհետև՝ Պալաթ, Բերա, Սամաթիա, Օրթաքեոյ, Գուրուչեշմե, Սկյուտար թաղերի դպրոցները: Նա ևս համոզված էր, որ հայ եկեղեցու հակառակորդների դեմ մրցելու գերավորագույն միջոցը դաստիարակության ու զարգացման ջանքերն են, ու անմնացորդ նվիրվեց այս կարևոր գործին: Նրա քաջալերական կեցվածքի արդյունքն էր շինարարական գործը (եկեղեցիներ, հիվանդանոցներ), հրատարակչական շարժումը՝ հայերեն, հայատառ թուրքերեն կրոնական, գրական, գիտական գրքերի հրատարակությունը, նաև՝ բազմաթիվ դասագրքեր, օրացույցներ և այլն: Նա թողեց հոգևոր ու աշխարհիկ աշակերտների մի խումբ, որոնք նոր աստիճանի հասցրին նրա գործը:

Պատրիարքական աթոռում ընտրվելու կապակցությամբ Զաքարիա Կաղզվանցին Ամենայն Հայոց Սիմեոն Կաթողիկոսից հատուկ կոնդակ ստացավ, որում նաև 6 կարևոր հրահանգներ էին պարունակվում.

ա. Հայաստանեաց եկեղեցու ավանդություններին համեմատ հովվել.

բ. Ժողովուրդը զգուշացնել ոչխարի մորթով գայլերից ու մեզանից հեռացած կրոնն ապականողներից.

գ. Հավատարիմ ու խորհրդական իշխանավորների հետ խորհրդակցելով գործել.

դ. Արժանավորներին պատվել, իսկ բանսարկուների ու խռովարարների նկատմամբ խիստ լինել ու դատել, եթե խրատները չեն օգնում.

ե. Հավատքի ու կրոնի մեջ փորձառուներին առաջնորդ կարգել.

զ. Հավատարիմ, հնազանդ ու ենթակա մնալ Մայր աթոռին:

Ամբողջ իր գործունեության ընթացքում Զաքարիա Կաղզվանցին հավատարիմ մնաց հայրապետական այս հրահանգին ու իր նախորդների՝ Հովհաննես Կոլոտ ու Հակոբ Նալյան պատրիարքների ավանդներին ու նրանց գործի արժանավոր շարունակողը եղավ: Գործունեություն, որը մեծապես խանգարում էր Կայսրությունում եվրոպական երկրների նպատակներին, ուստի Ավստրիայի ու Ֆրանսիայի դեսպանների կողմից Պատրիարքի պաշտոնանկությունը պահանջող բողոքներն ի վերջո բավարարվեցին Սուլթանի կողմից, և նա 1781թ. աքսորվեց Բուրսա: 1782թ. տաս ամիս անց նա կրկին պատրիարքական Աթոռը վերադառավ շնորհիվ եպարքոս Իզզեթ փաշայի, ի ցնծություն Կաղզվանցուն «Ազգասեր» անունը կնքած իր հուտի: ....

Չնայած այն հանգամանքին, որ 16-րդ դարի երկրորդ կեսին հանդես է գալիս տպագիր գիրքը, այնուամենայնիվ իր գոյությունն է շարունակում գրչության արվեստը, մանրանկարչությունը: Այն պայմանավորված էր պոլսահայ գրականության բուռն զարգացմամբ 17-րդ դարում: Թեև այդ շրջանում հիմնականում Ավետարաններ են ընդօրինակվել, այնուամենայնիվ դրանք որպես արվեստի գործեր մեծ արժեք են ներկայացնում:

16-17-րդ ..դարերում Կ.Պոլսում ստեղծագործում էին բազմաթիվ մանրանկարիչներ: Մանրանկարչության պոլսահայ դպրոցը տարբերվում էր իր գույների հյութեղությամբ, նկարի նրբագեղությամբ, իսկ ձեռագրերը գրավում էին հիմնականում նուրբ, գեղեցիկ բոլորագրով: Պոլսահայ մանրանկարչության կարևոր դեմքերից էր 17-րդ դարի առաջին կեսի բանաստեղծ, գրիչ և նկարիչ Հակոբ Ակնեցին: Հրաշալիորեն իմանալով Կիլիկյան ու Ղրիմի մանրանկարչական դպրոցները, միաժամանակ օգտագործելով եվրոպական արվեստի օրինակները, Ակնեցին ստեղծել է մանրանկարների մի ինքնատիպ շարք, որը հետագայում կրկնօրինակվել է ոչ միայն Կ.Պոլսում, այլև մյուս գաղութներում: 18-րդ դարում պոլսահայ մշակույթում մանրանկարչությունն իր տեղը զիջում է գեղանկարչությանը, որն իր ծաղկման շրջանն էր թևակոխել: Եթե մինչև 18-րդ

դարը պալատական նկարիչների պաշտոնը պարսիկ վարպետների մենաշնորհն էր, ապա այդ հարյուրամյակից սկսած այն անցնում է հայազգի Մանասների ընտանիքին: Նրանցից մեկը՝ Ռաֆայել Մանասն իր ուսումը ստացել էր Իտալիայում: Հայտնի պատմաբան Մուրաղջա Դ' Օհսընը գրում է, որ «նա եղել է իր արվեստակից եղբայրներից ավելի տաղանդավոր, ուստի և համարվել է իր դարի Ռաֆայելը»[25]:

18-րդ դարի սկզբից հայերն ունեցել են իրենց պալատական ճարտարապետները[26]: Պոլսահայ ճարտարապետության մեջ նշանակալի տեղ է գրավել Պալյան ընտանիքը, որոնց գործունեությանը նվիրված են մի շարք մենագրություններ[27]:

Պոլսահայ մշակույթի զարթոնքն անկասկած, մեծապես պայմանավորված է եղել գրականության զարգացմամբ: Այս ասպարեզում նշանակալի դեր են խաղացել Գրիգոր Դարանաղցին (1576-1643), Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը (1637-1695), Հովհաննես Կոլոտը (1678-1741), Հակոբ Նալյանը (1706-1764), Գևորգ Մխալյիմը (1681-1758), Պաղտասար Դպիրը (1683-1768) և ուրիշներ:

Առաջին հայկական տպարանը Կ.Պոլսում հիմնադրվել է Աբգար Թոխաթեցու (Եվդոկացի) կողմից 1567 թվականին: Հետագայում, ավելի քան մեկ հարյուրամյակ անց, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը (1637-1695) 1677 թվականին հիմնում է տպարան, հրատարակում երկու գիրք: Ավելի ուշ՝ ընդհուպ մինչև 17-րդ դարի վերջը Կ.Պոլսում գրքեր չեն հրատարակվել: 1698թ. հրատարակչական ասպարեզում հայտնվում են Գրիգոր Մարզվանցին (Մերջանգադե Գրիգոր դպիր Մարզվանցի, ?-1735) և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին (1670-1747): Առաջինը տիրապետել է տառեր ձուլելու, տպելու գործին, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի կաղապարներն օգտագործելով պատրաստել է նոր կաղապարներ, 1694-ին հիմնել տպարան, որն իր գոյության 40 տարիների ընթացքում հրատարակել է 11 գիրք: Աստվածատուր Դպիր Կոստանդնուպոլսեցին 1698-ին առանձնանալով Գրիգոր Մարզվանցուց, հիմնադրել է իր տպարանը, որը կեսդարյա

25 D' Ohsson M., Tableau Général de l'Empire Ottoman, Paris, 1790, v. 2, p. 243. Տես նաև՝ Ստեփանյան Գ.Խ., Նկարիչ Մանասները: Բաներ Գ.Ա հասարակական գիտությունների, Եր., 1963, հ. 12, էջ 77-82: Սագզեան Ա., Մանասներ-18-19-րդ դարերի հայ նկարիչների գերդաստան, (Ընդարձակ տարեցոյց Ս.Փրկիչ ազգային հիվանդանոցի, Կ.Պոլիս, 1933թ., էջ 52-57: Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը 17-18դդ., Ե., 1974, էջ 137: Տեր Ստեփանյան Սրմեն, Պատկերահան Ռաֆայել Մանաս (Գրական թերթ, Ե., 1983, նոյեմբերի 25): Տես՝ Sakisian A., Pages d'Art Arménien, Paris, 1940, p. 97-101. Tuğlac Pars, Osmanlı Mimarlığında Batılaşma Dönemi ve Balyan ailesi, İstanbul, 1981; 18-դդ դարի երկրորդ կեսին Կ.Պոլիս այցելից իտալացի ճանապարհորդ արքա Թոդերիգինն և հինգ տարի ապրեց այնտեղ (1781-1786): Վերադառնալով հայրենիք, Վենետիկում 1787թ. իտալերենով լույս ընծայեց թուրքական գրականությանը նվիրված Delle' Abate Giambatista Toderini. "Letteratura Turchesca" աշխատությունը, որը երկու տարի անց Փարիզում հրատարակվեց ֆրանսերենով, ուր գրում է Մանասների ընտանիքի մասին: Նա անձամբ ծանոթ էր Ռաֆայել Մանասի որդու հետ, եղել էր նրա արվեստանոցում, (L'Abbe M.Toderini. La literature des turcs, Paris, 1789, p. 60-61); Bülent Aksoy. Rahip Toderini ve Eseri Üstüne, "Tarih ve Toplum", 1987, N 454, s. 42-44. 1995 թվականին Փարիզում կայացած աճուրդում վաճառքի էր հանվել Արքայ Համիդի թռուցիկներից մեկի թանկարժեք հավաքածուի մի մասը, որի կատալոգում ի թիվս արժեքավոր շատ գործերի, կային Մանաս ընտանիքի երկու ներկայացուցիչների փոքր չափի երեք թե չորս աշխատանքները:
Garo Kürkmen, Osmanlı İmberatorluğunda Ermeni Ressamlar, İst., 2004, 2 cilt, 988s.

26 Քեռմուրճան Ե., «Ստամպօլայ պատմութիւն», Վենետիկ, հ. 1, էջ 213 և հ. 2, էջ 493: Տես նաև՝ Ապպայճեան Ա., Պատմութիւն հայ կեսարիոյ, Կահիրե, 1937, էջ 15-35: Չամչեան Մ., Հայոց պատմութիւն, Վենետիկ, 1786, հ. 3, էջ 807:

27 Tuğlac Pars, Osmanlı Mimarlığında Batılaşma Dönemi ve Balyan Ailesi, İst., 1981; Ղորսեան Ե., Պալեան գերդաստանը, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1970-1973թթ.:

Գ.Խ.ՊՐՈՍՅԱՆ

ժամանակում հրատարակել է մոտ 43 գիրք: Հետագայում նրա գործը շարունակել է որդին՝ Հովհաննեսը, մինչև 1776 թվականը: 18-րդ դարի սկզբին Մխիթար Մեքաստացին՝ Վենետիկի Մխիթարյան կաթոլիկ միաբանության հիմնադիրը, հրատարակել է մի շարք գրքեր: 19-րդ դարի սկզբին Կ.Պոլսի հայ տպարանների թիվը հասնում է 25-ի:

Տպագրական գործի զարգացման մեջ մեծ ավանդ են ունեցել Կ.Պոլսո պատրիարքներ Հովհաննես Կոլոտ Բաղիշեցին, Հակոբ Նալյանը, Զաքարիա Կաղզվանցին (1719-1799), հայտնի գրող, մանկավարժ և հրատարակիչ Պաղտասար Դպիրը (1683-1768), Պողոս Արապյան Ապուչեխցին (1742-1835) և ուրիշներ:

Առանձնապես կարևոր է եղել Արապյան ընտանիքի ավանդը: Շարունակելով տպագրիչ հոր՝ Հովհաննես Աստվածատրյանի գործը, մոտ 70 տարի զբաղվել է դրանով, եղել պալատական տպարանի ղեկավարը: Բացի հայկական նոր տառերից, թուրքական տպագրական մայր տառեր է ստեղծել: Վրաց Հերակլ երկրորդ թագավորի 1770թ. հրավերով Թիֆլիսում ձուլել է վրացական տառեր, հիմնել տպարան: Բարձր գնահատության է արժանացել սուլթան Մահմուդի կողմից, ստացել «Մամուլ» նշանը[28]:

Այս գործիչների կողմից հիմնադրված պոլսահայ գրական դպրոցը դարձավ հիմք՝ 19-րդ դարի երկրորդ կեսին հայ լուսավորական շարժման համար: Համարյա բոլոր հեղինակները ուղղակի կապ են ունեցել հայատառ թուրքերեն գրականության և գրահրատարակչության հետ:

28 Տպագրության հարցին է նվիրված պոլսահայ բանասեր Թեոդիկի «Տիպ ու տառ» աշխատությունը, Կ.Պոլիս, 1912:

Բ. Հայատառ թուրքերեն ձեռագիր գիրքը (14-19դդ.)

Ճակատագրի բերումով հայկական ձեռագրերը ցրված են աշխարհով մեկ: Մատենադարանների և մասնավոր հավաքածուների մեզ հայտնի ձեռագրացուցակներում հայատառ թուրքերեն ձեռագրերը զգալի թիվ են կազմում: Մեզ հետաքրքրող ձեռագրերի գերակշռող մասը գտնվում է Երևանում՝ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում: Այն իրենից ներկայացնում է բանահյուսական, պատմագրական, գեղարվեստական, կրոնաբարոյախոսական, աստվածաբանական, եկեղեցական, բնական գիտություններին, կենցաղային խնդիրներին վերաբերող ձեռագրական ինքնուրույն և թարգմանական հարուստ ժառանգություն և ընդգրկում է 600 ամյա մի ժամանակաշրջան: Այս ձեռագրերը գրի են առնվել կամ ընդօրինակվել Կ.Պոլսում, Տիգրանակերտում, Կտուց անապատում, Բայազետի բերդում, Աղթամարում, Եվդոկիայում, Կարինում, Սեբաստիայում, Վանում, Անկյուրայում, Զեյթունում, Պրուսայում, Կյումուշխանեում, Պետերբուրգում, Էջմիածնում, Աստրախանում, Ղրիմում, Կալկաթայում և այլուր:

***

Բազմադարյան մշակույթ ունեցող հայ ժողովրդի մտքի, իմաստության, փորձի, ուրախության, սրամտության, վշտի ու տառապանքների, երազների ու ցանկությունների արտահայտությունները Օսմանյան կայսրության թրքախոս գավառներում հնչել են թուրքերեն և գրի են առնվել հայատառ թուրքերենով: Ուստի զարմանալի չէ, որ մեզ չի հասել որոշ գավառների բանահյուսության և ոչ մի հայերեն նմուշ: Այս հանգամանքն այսօր այնքան հմտորեն օգտագործում են թուրք գիտնականները, ի թիվս այլ երևույթների՝ հայ բանահյուսության շատ նմուշներ ներկայացնելով որպես իրենց սեփականությունը: Թուրքերեն լեզվով լինելու ցավագին այս հանգամանքը, այնուամենայնիվ նպաստել է, որպեսզի ավելի արագ ու դյուրին տարածվեն այս ստեղծագործությունները Օսմանյան միապետության բազմազգ ժողովուրդների շրջանում, ազդեն ստեղծագործական մտքի վրա, նաև ազդվեն նրանցից:

Աշուղական գրականությանը, բանահյուսությանն են վերաբերում հայատառ թուրքերեն ձեռագրերի գերակշռող մասը:

Հայ աշուղական, գուսանական արվեստի արմատները դարերի խորքից են գալիս, երբ դեռ չէր էլ կազմավորվել թուրքական պետությունը: Վաղ և միջնադարյան հայ գուսանական, աշուղական գրականության ուսումնասիրությանն են նվիրվել գիտական բազմաթիվ հրատարակություններ, անթոլոգիաներ, որոնք թույլ են տալիս հետևելու մեզ հետաքրքրող այս գրականության զարգացման ընթացքը, համադրելու և ճիշտ ըմբռնելու հայատառ թուրքերեն տաղերն իրենց տարբերակներով: Բանասեր Գ.Լևոնյանը հաշվում է ավելի քան 400 աշուղներ, որոնք 17-19 դդ.

ստեղծագործել են միաժամանակ հայերեն և հայատառ թուրքերեն լեզուներով[29]:

Գիտական գրականության մեջ ընդունված է եղել զանազանել աշուղների երկու տիպ: Առաջինները հանպատրաստից են հորինել ու կատարել իրենց երգերը որևէ գործիքի նվագակցությամբ և կոչվել են «մեյտան շուարասը»: Երկրորդները, որոնք նախապես գրավոր ունեցել կամ պատրաստել են իրենց տաղերը՝ «քալեմ շուարասը» են կոչվել[30]: Այնուամենայնիվ դժվար է զանազանել այս աշուղներին, քանզի երկրորդները ևս շատ հաճախ հանպատրաստից էլ են կատարել:

Հաճախ, գայթակղվելով աշխարհիկ, ժողովրդական թեմաներով գրված տաղերով, հոգևոր հայրերը ոչ միայն մշակել և վերափոխել են դրանք հոգևոր տաղերի, այլև իրենք էլ են ստեղծել աշխարհիկ բովանդակության երգեր՝ կրոնական նուրբ քողի տակ, գրի առել ժողովրդի այդ գանձերը, որոնց մի մասն էլ այսօր մեզ է հասել: Ավելին, ընդունելով ժողովրդական երգերի ավանդույթները, գրել են ժողովրդական, խոսակցական լեզվով, որը հիմնովին տարբերվում էր եկեղեցական լեզու դարձած հին հայերենից՝ գրաբարից: Թրքախոս գավառներում հոգևոր հայրերը երբեմն ստեղծագործել են թուրքերեն և այդ տաղերը գրի են առնվել հայատառ թուրքերենով: Հաճախ էլ հայտնի թուրքերեն երգի նույն սիրված մեղեդու համար գրվել են հայերեն նոր բառեր՝ նպատակ ունենալով զարկ տալու հայերեն լեզվով երգերի տարածմանը: Ձեռագրերը, ուր ամբարված են բազմաթիվ հայատառ թուրքերեն չափածո ստեղծագործություններ, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու թուրքական չափածո գրականության մասին ևս, հետևել դասական ու ժողովրդական գրականության զարգացմանը: Թուրքական դասական գրականությունը, ընդօրինակելով արաբա-պարսկական միստիկ բովանդակությամբ հագեցված ծեքծեքուն, վերամբարձ ոճը՝ ստեղծվել ու զարգացել է պալատներում, միշտ հեռու, օտար մնալով ժողովրդին:

Պալատական գրականությունը չի արտահայտել իր ժամանակի բնորոշ գծերը, սոցիալական իրավիճակը: Ավանդական կառուցվածքային բանաձևերից դուրս չեկող ստեղծագործություններում չեք գտնի հեղինակի ժամանակակցին: Այս բանաստեղծներից միայն մի քանիսն են, որ վայելել են ժողովրդի սերը:

Աշխարհի բոլոր տիրակալները, թագավորներն ու սուլթաններն ունեցել են իրենց կողքին երգիչներ, որոնց հավանավորել են, սիրել, երբեմն էլ զգուշացել նրանց սուր խոսքերից: Այս երգիչներից ոմանք, ապրելով ճոխ պալատներում, շքեղության մեջ, ձգտել են դեպի ժողովուրդը, բնությունը և այնտեղ գտել իրենց հոգեկան հանգստությունը, ազատությունը՝ զերծ կաշկանդումներից: Նրանք դուրս են եկել սոսկ դասական ավանդույթներով ստեղծագործող

29 Մատենադարանում պահվող ավելի քան 180 ձեռագրեր պարունակում են հայատառ թուրքերեն տաղեր, բանահյուսության նմուշներ: Տես՝ Գ.Լևոնյան, Հայ աշուղները և նրանց արվեստը, Եր., 1944, էջ 34:
30 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Կահիրէ, 1937, էջ 1554; Ahmed Kabakl Türk Edebiyat, Ankara, 1967, s. 139, 633.

պալատական երգչի սահմաններից, երգել են երկրային սեր, ժողովրդի հոգսերն ու ուրախությունները, երբեմն էլ ապստամբել են պալատի դեմ, սպառնացել, որի համար այնքան խստորեն պատժվել են:

Թուրքական իրականության մեջ, պալատական թուրք երգիչների կողքին ստեղծագործել են շատ սիրված ու գնահատված հայազգի երգիչներ: Դրանցից են Աբդուլ Մեջիդ սուլթանի երգիչ Քեշիշօղլին, Սուլթան Մահմուդ Բ-ի երգիչ Իլֆեթին և ուրիշներ:

Հայատառ թուրքերեն ձեռագիր տաղարաններում հանդիպում ենք անունների, որոնք թուրքական գրականության պատմության մեջ համարվում են դասական գրականության ներկայացուցիչներ: Նրանց մի քանիսի լեզուն, հայկական մտածողության առկայությունը, բովանդակությունը, տաղաչափական կառուցվածքը թույլ են տալիս ենթադրելու դրանց հեղինակների հայ լինելու հանգամանքը: Նույն այս հեղինակների անունները գտնում ենք համապատասխան շրջանի թուրք գրականության մասին աշխատություններում՝ ներկայացված որպես թուրք աշուղներ՝ համապատասխան կենսագրություններով: Այդպիսին են Ահմեդ Քաբաքլուի, Վասֆի Մահիր Քոջաթուրքի[31] աշխատությունները, որտեղ գտնում ենք մեզ հետաքրքրող աշուղների մասին ոչ միայն գրականագիտական տեղեկություններ, այլև, նրանց նկարները թուրքական հագուստներով: Հայկական ձեռագրերում ամբարված հայատառ թուրքերեն աշուղական տաղերի գիտական, քննական հրատարակությունները ոչ միայն ճշտումներ կմտցնեն նրանց հեղինակների ազգային պատկանելության հարցում, այլև բազմաթիվ վերագնահատումների կմղեն: Պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ աշուղների մեծ մասը կրել են պարսկական անուններ: Երկրորդ, նույն անունը կարող էին կրել մի քանի աշուղներ, և երրորդ՝ նույն աշուղը կարող էր ունենալ մի քանի անուններ: Այսպես օրինակ, 19-րդ դարի աշուղ Զարուրին մրցույթներում հաղթելով, ի թիվս այլ աշուղների, նաև հայտնի Թիւճճարիին, ստացել է Քեշիշօղլի մականունը, որը փոխել է Զարուրիի: Կ.Պոլսում մտերմանալով մի թուրք բեյի հետ՝ ներկայացվում է Սուլթան Մահմուդ Բ-ին, որին հանպատրաստից ձոնում է մի տաղ: Առատ պարգևի հետ միասին սուլթանից ստանում է նոր մականուն՝ Շավգի[32]:

Հայատառ թուրքերեն աշուղական գրականությունն ուսումնասիրել են օտարազգի հետազոտողներից գերմանացի նշանավոր արևելագետներ Էննո Լիտտմանը[33], Օտտո Շպիսը[34] և ուրիշներ: Թուրք հայտնի գիտնական Ֆուադ Քյոփրուլուն իր աշխատություններում անդրադարձել

31 Vasf Mahir Kocatürk, Türk Edebiyat Tarihi, Ankara, 1970, s. 426, 474, 498, 584.

32 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Կահիրէ, 1937, էջ 1556: Առիթ ենք ունեցել թուրքական հեռատատեսության 4-րդ ծրագրով հետևելու «Թուրքերեն լեզու և գրականություն» հաղորդաշարին, ուր ներկայացվում են մեզ հետաքրքրող հայազգի աշուղները, լատինատառ թուրքերենի վերածված տաղերի նմուշներով հանդերձ:

33 Enno Littman, Das Malerspiel, Sitzungsberichte der Heiderger Academie der Wissenschaften, Fil. Hist., Kl. 1910; idem. Ein Turkisches Stereitgedicht über die Ehe, "Bildtrini Evil ile Bekjaryn dasitani". /dans "A volume of Oriental Studies presented to "Professor Edward G.Browne", pp. 269-284.

34 Spies Otto, Esman und Zejdshan, "Ein türkischer Volksroman aus Kleinasien nach einem armenisch-türkischen Druch Antohropos, t. XX, 1925.

է երեք հայ աշուղների, որոնք գրել են հայատառ թուրքերեն: Դրանք են՝ Մեսիհի Էրմենին, Սարգիս Զեքին (Նուռլյան), Միրզա խանը: Ֆ.Քյոփրուլուն դրվատանքով է հիշատակում 18-րդ դարի մի այլ աշուղի, ոմն Վարդանի, որն անհամեմատ ավելի տաղանդավոր է եղել, քան վերը հիշատակածները[35]: Իզզեթ Ուլվին, Ահմեդ Ռասիմը թվում են Ստամբուլի բազմաթիվ հայ աշուղների, որոնք միաժամանակ թուրքերեն են ստեղծագործել: Յուսուֆ Նաբիի մի նամակից իմանում ենք 16-րդ դարի երկու հայ աշուղների մասին՝ Վարդան և Մեջնուն[36]:

Ահա 18-19-րդ դդ. ստեղծագործած մի քանի անուններ՝ վերցված հայատառ թուրքերեն տաղարաններից. Պահարի, Սետաէի, Մեվզունի, Ակեահի, Մեքշուֆի, Զաեիֆի, Ճէհտի, Շուխի, Էօմր, Շազիրի, Թանգիրի, Ապիտի, Ֆասլը, Նեպատի, Հաշիմի, Գարունի, Մավզունի, Մենաթի, Կեվհերի, Մարհոշ օղլու, Մեճնունի, Տեհրի, Իրֆանի, Բավզիա, Նեվնի, Լիոճեյի, Նեֆինի, Նիհատի, Վեհպի, Ճիւտայի, Նազիր[37], Աբրահամ, Կարաջ օղլան, Դալլաք Մուրադ, Տօնի, Միսկին, Բուրջի, Պետրջի օղլի, Օվչի Նավասի, Մամադ, Ղամբար օղլի, Քեշիշ, Ալավերդի, Մահմուդ, Հարություն Սալմաստեցի և այլն[38]: Հայատառ թուրքերեն տաղերը մեր օրերում ևս շարունակում են հետաքրքրել ուսումնասիրողներին[39]:

Աշուղները (հիմնականում սազի, թամպուրիի ուղեկցությամբ) շրջել են Օսմանյան բազմազգ կայսրությունով, երգել, խաղացել, կատարել են և՛ իրենց և թե՛ ուրիշների ստեղծագործությունները: Եվ քանի որ թուրքերենը հասկանալի էր բոլոր ազգերի համար, բնական է, որ լինելով անգամ հայախոս գավառների ծնունդ՝ աշուղները կատարել են հիմնականում թուրքերեն[40]:

Հայատառ թուրքերեն տաղարանների ամենագեղեցիկ նմուշները սիրո տաղերն են,

---

35 Fuad Köprülü, Türk Edebiyatında Ermeni Edebiyat üzerindeki Tesirat, Edebiyat Fakültesi Araştırmaları, Ankara, 1966, s. 239-269.

36 Ամիրյան Խ., Հայ մշակույթի պատմության ենթադրյալ հարցի շուրջը, Եր., «Սովետական գրականություն» ամսագիր, 1972, N 3:

37 ՍՄ, ձեռ. 6438:

38 ՍՄ, ձեռ. 9003:

39 Երևանի Եղիշե Չարենցի անվան գրականության ու արվեստի թանգարանում պահվող պոլսահայ մտավորական Թորոս Ազատյանի արխիվում պահվում են մեծ թվով հայատառ թուրքերեն տաղեր, թաղիշ 6, N 78-80, 536 էջ: Սեր ժամանակակից պոլսահայ բանաստեղծ ու մատենագիր Գեորգ Բամպուքճյանը հրատարակել է հայատառ թուրքերեն տաղերի լատինատառի վերածած անթոլոգիա (Kevork Pamukciyan, Ermeni Harfli Türkçe Elyazma Eski Bir Cönk, İstanbul, 1984; "Folklor ve Etnografya Araştırmaları", N 1. Հայատառ թուրքերեն աշուղական գրականությամբ էր զբաղվում նաև մի այլ պոլսահայ գրագետ, որը Հայաստան հայրենադարձվելու տարիներին այս թեմայով աշխատություն էր պատրաստում: Նրա հողվածները հաստատում են, որ հայազգի են եղել հայտնի Հիթարին (18-րդ դ.), Մեկլյանին, Մեսթուրին և Թյուրապին (19-րդ դար): Տես՝ Ամիրյան Խ.Պ., Սիրո թեման թուրքալեզու հայ աշուղների երգերում, («Արևելագիտության հարցեր» ԵՊՀ ժողովածուի 1-2 համարում, Եր., 1983, էջ 230): Մեր կողմից «Արևելյան աղբյուրագիտություն» ԳԱ ժողովածուի մեջ (Ե., 1888, էջ 83-98) քարգմանվել, հրատարակվել է մինչ այդ անտիպ հրաշալի երկլեզվյա սիրո «Տաղ Գրիգորի ասացեալ», որը ընորոշ օրինակներից է հայատառ թուրքերեն աշուղական տաղերի: Տես՝ ՍՄ, ձեռ. 2394, էջ 182ա-184ա:

40 Հայ աշուղների ստեղծագործության տարածման, նրանց ունեցած մեծ ժողովրդականության գործում նպաստավոր դեր են խաղացել կայսրության ժողովուրդների կյանքում ընդունված աշուղական մրցույթները: Այս մրցույթներն անցել են որպես տոնախմբություններ և կազմակերպվել են հիմնականում հանդիսավոր առիթների ժամանակ: Բնականաբար մրցույթների ոչ բոլոր մասնակիցներն են շնորհալի կամ տաղանդավոր եղել: Ոմանք կատարել են սեփական ստեղծագործությունները, ոմանք նախընտրել են կատարել ժողովրդական և կամ մյուս աշուղների երգերը: Երկու դեպքում էլ մրցողները դուրս են եկել ընդունված կանոնների շրջանակից: Ի դեմս նրանց մենք գործ ունենք ժողովրդական բանահյուսության հավաքողների հետ, որոնք կատարելով այն՝ տարածել են ողջ կայսրությունով մեկ: Դա վերաբերում է ժողովրդական արվեստի բոլոր ժանրերին:

հավաստող դարերից եկած ամենախոր փիլիսոփայությունն այն մասին, որ զգացմունքներից ամենագեղեցիկը վեր է հասարակական, սոցիալական, դասակարգային, ազգային ու կրոնական բոլոր պատկանելություններից ու նախապաշարումներից՝ թեև այն ընդվզում է բազմադարյան սովորույթների ու ավանդույթների դեմ:

Տաղերում նկատել ենք կառուցվածքային հետևյալ տարբերակները.

- մեկ տողը հայերեն է, մյուսը՝ հայատառ թուրքերեն (երբեմն արաբախառը),
- տողերից մեկը մյուսի թարգմանությունն է կամ՝ միմյանց շարունակում են առանց թարգմանության: Հայերեն երկտողին, քառատողին հաջորդում է հայատառ թուրքերեն երկտողը կամ քառատողը՝ նույն սկզբունքով:

Նույնիսկ հայերեն տաղերում, հայրենիներում տեքստը երբեմն ընդմիջվում է հայատառ թուրքերեն բառերով, մտքերով, առանձին քառյակներով, որոնք բովանդակային շարունակություն են կազմում և կամ՝ նախորդի թարգմանությունն են պարզապես:

Մեծ թիվ են կազմում այն տաղերը, որոնց հեղինակները, ստեղծման ժամանակը՝ անհայտ են և որոնց հրատարակությունը մի քանի ստվար հատորներ կարող է կազմել: Դրանց մեծ մասը գեղարվեստական որոշակի արժեք են ներկայացնում: Մեզ են հասել Հովհաննես Երզնկացու (16դ.), Հովհաննես Թլկուրանցու (15դ.), Թաղեոս Կողոնիացի Թռխաթեցու (16դ.), Նահապետ Քուչակի (15-16դդ), 1512-1544 թթ հայոց կաթողիկոս Գրիգորիս Աղթամարցու (16դ.), Նաղաշ Հովնաթանի (1661-1721), Պաղտասար Դպրի (1683-1768), Հակո Նալյանի և ուրիշների հայատառ թուրքերեն տաղերը: Հայ աշուղական արվեստի ժողովրդականությունն ու ճանաչումը Օսմանյան կայսրության բազմազգ ժողովուրդների շրջանում, սկսած պարզ ժողովրդից մինչև պալատ՝ ակնհայտ էր: Եղել են դեպքեր, երբ ժողովրդի կողմից շատ սիրված հայազգի աշուղին թաղել են թուրքական...գերեզմանոցում, «պատճառաբանելով», որ մահվանից առաջ աշուղն իբր թե մահմեդականություն է ընդունել: Այսպես է պատահել 19-րդ դարի աշուղ Թալեպիի (նույն ինքը Թյուրապի Կեսարացի, նույն ինքը Հաջի Կարապետ) հետ[41]: Հայատառ թուրքերեն աշուղական գրականության ուսումնասիրության արդյունքում միայն հնարավոր կլինի պատկերացում կազմել այս գրականության զարգացման շրջանների, կրած և ունեցած ազդեցությունների շուրջ: Հայատառ թուրքերեն տաղարաններում տեղ են գտել քառյակներ, գազելներ, բեյթեր, որոնցից մի քանիսի հեղինակներն ամենայն հավանականությամբ հայեր չեն: Հայատառ թուրքերեն աշուղական ձեռագրական հարստությունը ներառում է մի շարք ձեռագրեր, որտեղ հայազգի աշուղների երգերի կողքին գերակշռություն են կազմում թուրք աշուղների, բանաստեղծների ստեղծագործությունները: Դրանք մասնագիտական բարձր որակով կազմված ժողովածուներն են, ուր բացի բանաստեղծական տեքստից, հեղինակների անուններից, տրված են դրանց երգելու

41 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ Կեսարիոյ, Կահիրէ, 1937, էջ 1561:

եղանակները, ռիթմերը և հայկական ու եվրոպական նոտագրությամբ դրանց եղանակները՝ բառային տողատակերով հանդերձ, երգերի տեսակները տերմինների երաժշտագիտական բացատրություններով, համապատասխան բառացանկերով: Հայատառ թուրքերեն ձեռագրերի թվում կան զուտ թուրքական երգերի ժողովածուներ հայկական ու եվրոպական նոտագրությամբ: Այս ձեռագրերը հազվագյուտ արժեք են ներկայացնում Կ.Պոլսի թուրք ստեղծագործողներով, աշուղներով զբաղվող մասնագետների համար: Դրանց կազմողները եղել են բացառապես հայեր, երաժշտագետներ (ինչպես Հ.Լիմոնճյանն ու իր աշակերտները) և հիմնականում պատկանում են 19-րդ դարի ձեռագրական մշակույթին[42]:

Հայատառ թուրքերենով մեզ են հասել բազմաթիվ աշխատանքային երգեր: Երգեր՝ նվիրված հեթանոսական և քրիստոնեական տոներին (ծաղկազարդի, բարեկենդանի, վարդավառի, համբարձման տոների ժամանակ շուրջպարերի հետ կատարվող երգեր): Այս երգերի մի մասի վառ թատերականությունը թույլ է տալիս ամենայն մանրամասնությամբ վերարտադրելու որոշ ծիսակատարություններ: Այս առումով անչափ գունեղ են հարսանեկան երգերը, որոնք բազմաթիվ մասերից են կազմված: Յուրաքանչյուր արարողություն ուղեկցվել է համապատասխան երգերով: Ընտանեկան կյանքին վերաբերող երգերը, բացի թատերական երանգներից, պարունակում են դարերի փորձն ու փիլիսոփայությունը: Դրանք մեղմ ու քնքույշ օրորոցայիններ են, տանտանաներ: Դրանք հատկապես գունեղ, երգիծական երգեր են, որոնց գլխավոր գործող անձիք հարսերն ու սկեսուրներն են:

Աշուղներն անբաժան ուղեկիցներն են եղել պատերազմների, ապստամբությունների[43]: Նրանք երբեմն ամենայն մանրամասնությամբ նկարագրել են դեպքերը, դեմքերը: Այս երգերն իրենցից ներկայացնում են սպառնական, խրոխտ ոճով գրված քայլերգեր: Շատ հաճախ, արշավանքների, մարտերի, ընդհարումների մասին պատմող երգերը թուրքերեն են հնչել նույնիսկ հայախոս գավառներում, որպեսզի թուրքերը հասկանան: Բազմաթիվ նման երգեր գրված են ընդդիմախոսությունների հիման վրա, ուր հետաքրքրությամբ երևան են գալիս պայքարող կողմերի նկարագրերը: Հակառակորդն այս երգերում տարբեր իրադրություններում տարբեր բնավորության գծերով է հանդես գալիս. վախկոտի դիմաց՝ գոռոզ, պոռոտախոս ու ամբարտավան: Քաջի հետ հանդիպելիս նրանք քծնող են ու վախկոտ: Արագորեն են հյուսվել քաղաքական, երգիծական երգերը, որոնք արագ էլ մոռացության են մատնվել, քանզի նվիրված են եղել որոշակի դեպքերի, առանձին պատմական դեմքերի, իրադարձությունների: Այս երգերը հիմնականում որոշակի

42 Տես՝ ՍՄ, ձեռ.11042, նույն տեղում նոր հավաքածուի ձեռ. 201, 204-9, 211-15, 229,245,267 .

43 Աշուղների երգերին տարբեր գավառներում տարբեր անվանումներ են տրվել: Օրինակ Զեյթունում *ավայներ* են անվանվել աշուղների մարտական, նաև հովվերգական երգերը: Կարծում ենք այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ ձեռագրերը. ա. Տաղեր. (Հ.Ամառեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Թարգիզի, Վիեննա, 1910, ձեռ. 25 ա, 10 էջ հայատառ թուրքերեն, և բ. «Զիվիստան միսիլի ախբր զամանտայ» (Վանի հերոսամարտի մասին պատմական տաղ) - 15 էջ հայերեն և հայատառ թուրքերեն՝ դեմ դիմաց:

ուղղության, կառուցվածքային կանոնների չեն ենթարկվել: Ուղեկցվելով թամպուրայի[44] նվագակցությամբ, կատարվել են խնջույքների, ճամփորդությունների, ուխտագնացությունների ժամանակ:

Ժողովրդական բանահյուսության ամենաինքնաբուխ արտահայտությունները երգերն են, որ կատարվել են տարբեր առիթներով՝ նաև տխուր ու դժբախտ: Մեզ հասած հայատառ թուրքերեն պանդխտության երգերը կարոտի երգեր են՝ լեցուն ավելի շատ հոռետեսությամբ, քան թե բարի վերադարձի ու լավ վաստակի հույսով: Այս երգերը վերաբերում են ոչ միայն պանդուխտին, այլև նրան սպասող մորը, հորը, հարազատներին, հարսնացուին: Մորմոքով լեցուն այս երգերի մի մասը բնականաբար վերաճում է անեծքի՝ ուղղված իրենց դժբախտության պատճառը հանդիսացողներին.

Կէօգիւնիւն ըշղոը սէօյիւնսիւն (Աչքիդ լույսը մարի)

Ճիյէրիմէ աթեշ տիւշսիւն (Հոգիդ կրակ ընկնի)

Օճաղրն պատսրն (Օջախդ կործանվի)

Էվին պաշընա եղխրլսրն: (Տունդ գլխիդ փլվի)

Ժողովրդի դառնությունների, դժբախտ ու տխուր օրերի երգերից են եղերերգերը, ողբերը, որոնք հիմնականում կատարվել են հանպատրաստից և ունեցել են իրենց որոշակի, ընդունված բովանդակային ու կառուցվածքային ձևերը[45]:

Ժողովրդական բանահյուսության մյուս ժանրերին վերաբերող ստեղծագործությունները արդյունք են նաև ժողովրդի մեջ ընդունված՝ ձմեռվա երկար երեկոներին հավաքվելու, պատմություններ պատմելու, զբաղվելու, զվարճանալու սովորության: Մեծ թիվ են կազմում առածները, առակները, ասացվածքները[46], հեքիաթները[47], վիճակախաղերը[48], թվաբանական խոսելուկները, տաղ-հանելուկները և առած-հանելուկները[49], ոտանավորները[50], գուշակությունները[51], պատմությունները՝ ընդմիջված երգերով[52]:

Այս ստեղծագործություններում գերիշխում են չափածո ձևերը:

---

44 Թամպուրի-հայկական եռալար, աղեղով գործիք, որը տարբեր էր արաբա-պարսկական ջնարից (տես՝ Ս.Լիսիցյան, Հայ ժողովրդի հինավուրց պարերը և թատերական ներկայացումները, Եր., 1958, հ. 1, էջ 152-153): Տիգրան Փափազյանի «Պատմութիւն Բալու Հաւաս գիւղի» (Թեյրութ, 1960) գրքում ներկայացվում է հայատառ թուրքերեն քաղաքական մի երգ՝ բարբարու Շարիֆ Բեկի աքսորի առիթով գրված, որ երգել են նաև թուրքերը (էջ 233): Գրքում կան հայատառ թուրքերեն աշխատանքային՝ կալի երգերի հրաշալի օրինակներ:

45 ՄՄ, ձեռ. 3300:

46 Թոփճեան Յ., Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, Վենետիկ, Ս.Ղազար, 1962, 1962, ձեռ. 158, էջ 2ա-163բ, «Աղուեսագիրք» (163 առակ): Տես՝ Մատենադարան, ձեռ. 5941, 1400, 2163, 8048.

47 Թոփճեան Յ., Ցուցակ ձեռագրաց Արմաշի վանքին, ձեռ. 157. Մատենադարանի 17-րդ դարի «Տուտի նամէ» ձեռագրում՝ մայմունի, խոջաստի և թութակի մասին պարսկական հեքիաթի հայատառ թուրքերեն տարբերակն է (ձեռ. 6657):

48 Անդ, ձեռ. 1675, 10264:

49 Անդ, ձեռ. 1786, 3442, 5373, 5616.3227:

50 Անդ, ձեռ. 3830, 3998, 9117, 9404, 10097:

51 Անդ, ձեռ. 10262, 5941:

52 Անդ, ձեռ. 9074, 6657:

Ժողովրդի կենցաղի, սովորույթների մի այլ կողմի՝ սնոտիապաշտության արտահայտություններն են նաև հմայագրերը: Ընդունված են եղել վերջիններիս արաբատառ տեքստերը: Ուստի պատահական չէ, որ հայատառ թուրքերեն հմայագրերին անպայման կից են նրանց արաբերեն ու պարսկերեն տեքստերը[53]:

Տրամաբանական պիտի համարել այն երևույթը, որ՝ լոկ հայկական կամ ինքնուրույն ստեղծագործություններ կատարելով բանասացները, աշուղները այդքան մեծ հարգանք, սեր ու ժողովրդականություն դժվար թե կարողանային վայելել Օսմանյան կայսրության նման բազմազգ մի երկրում: Նրանք մեծ դեր են խաղացել նաև պետության մյուս ժողովուրդների բանահյուսության տարածման, կատարման, մշակման, նոր տարբերակներ ստեղծելու գործում: Այդ են վկայում տարբեր ժանրերի ստեղծագործություններին կից (ոմանց) պարսկերեն, հայատառ պարսկերեն, թաթարերեն, հունարեն, երբայերեն, լատիներեն, հունգարերեն (մաճառերեն), հայատառ քրդերեն, օսմաներեն, հայատառ արաբերեն, մոլդավերեն զուգահեռ տարընթերցումները: Հայատառ թուրքերենով մեզ են հասել ոչ միայն այլազգի և այլալեզու աշուղների ստեղծագործությունները, այլև նրանց ժողովուրդների բանահյուսության մի շարք նմուշներ: Արևելքում տարածված սիրավեպերի առկայությունը հայատառ թուրքերեն ձեռագրերում ապացույց է այն բանի, որ դրանք մեծ սիրով պատմվել, երգվել են նաև հայկական շրջանակներում ու գրի են առնվել հայատառ թուրքերենով: Շահ Իսմայիլի, Ասլիի և Քյարամի, Աշուղ Դարիբի, Քյոռ Օղլու, Խան Չոբանի, Թահիր Միրզայի պատմություններն առատորեն ընդմիջված են երգերով[54]: Նույնիսկ այս պատմությունների հայերեն տարբերակներում երգերը հայատառ թուրքերենով են հիմնականում:

Հատկապես թուրքաշատ վայրերում հայերն ազատ չէին իրենց մայրենի լեզուն օգտագործելու: Հենց այսպիսի վայրերում են ստեղծվել հայատառ թուրքերեն չափածո հոգևոր ստեղծագործությունները, նպատակ հետապնդելով նաև պահպանելու մարդկանց մեջ հավատարմությունը սեփական ժողովրդի, հայ առաքելական եկեղեցու նկատմամբ, զարկ տալու հավատքին և կանխելու հավատուրացությունը, ուծացումը:

Հոգևոր, կրոնաբարոյախոսական բնույթի ամենավաղ հայատառ թուրքերեն նմուշները 16-17 դդ. պատկանող օրհնություններ և աղոթքներ են[55]:

---

53 ՄՄ, ձեռ. 9906, 10284:

54 ՄՄ, ձեռ. 2842, 7318, 9003: Հետագայում, նույն այս սիրավեպերն առատորեն տպագրվել են հայատառ թուրքերենով, ունենալ բազմաթիվ վերահրատարակություններ: Հայատառ թուրքերենով այս տպագրություններն այսօր դարձել են նաև թուրք հետազոտողների քննության առարկա, տես՝ Թուրգութ Քութի (*Turgut KUT*) հոդվածներն այս մասին:

55 ՄՄ ձեռ. 362, 1644, 1679, 1856, 2274, 3506, 5613, 8469: Խոսքը վերաբերում է Կիրակոս Գանձակեցու (1201-1271) «Պատմությանը», ուր նկարագրվում են բազմաթիվ քաղաքների ու գյուղերի ավերումը թաթար-մոնղոլների կողմից, ինչպես նաև հայ-թաթարական փոխհարաբերությունները (տես՝ Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Եր., 1961, էջ 270-275, բառարան): Հայատառ թաթարերեն երկու ձեռագրեր՝ 2412 և 3546 պահվում են Կրակովում, Չարդորիսքի (Czartorisk) իշխան Բուլավի անվան թանգարանի ձեռագրական ֆոնդում («Հանդէս ամսօրեայ», 1887, էջ 55-57): Առաջինը ժամագիրք է՝ աղոթքներով ու աղոթքով: Երկրորդը՝ սաղմոս, մաղթանք, աղոթք, հիշատակարան: Հայատառ թաթարերեն ձեռագրեր կան Վիեննայի կայսերական մատենադարանում, Մխիթարյան միաբանության ձեռագրերի թվում (Տես՝ Յ.Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց կայսերական մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1891 և Յ.Տաշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Վիեննա 1895):

Բացի առօրյա եկեղեցական ծիսակատարություններին վերաբերող ձեռագրերից, հայատառ թուրքերենով պահպանվել են հոգևոր տաղեր[56], կրոնաբարոյախոսական պատմություններ[57], եկեղեցիների պատմությանը վերաբերող ձեռագրեր[58], վարք սրբոց[59], խրատներ, քարոզներ[60], հայսմավուրք[61], ախտարք[62], ճաշոց[63], եկեղեցական գրագրության օրինակներ[64], ամուսնական դաշնագրերի պատճեններ[65], անդորրագիրք և կահագիրք[66], ճառեր[67], կրոնական տաղեր[68], ռամկիրք և այլն:

Հետաքրքրություն են ներկայացնում բժշկարանները. օրինակ՝ իտալերենից թարգմանված եռամաս մի բժշկարան, որը 18-րդ դարի ձեռագիր է[69] և կազմված է բնախոսության, ախտահանության, ախտորոշման բաժիններից:

Բժշկարաններն ունեն առողջապահությանը, մարդակազմությանը, բույսերի բուժիչ հատկություններին նվիրված մասեր:

Հայ իրականությունում բնագիտության և բժշկության ամենաակնավոր դեմքերից է եղել Ամիրդովլաթ Ամասիացին (1415-1496), որը հեղինակ է տասնյակից ավել գիտական մեծարժեք աշխատությունների: Անձնական մեծ փորձը, գիտական խորը իմացությունը և բազմալեզու աղբյուրները հիմք են ծառայել այս գործերի ստեղծման համար: Նրա «Օգուտ բժշկության» ծավալուն գործում ի մի է բերված բնագիտական հարստագույն նյութ: Նկարագրված են 1700 բույսերի, կենդանիների ու մետաղների բուժիչ հատկությունները, դեղերի պատրաստման ճշգրիտ չափսերն ու դեղատոմսեր: Ամիրդովլաթ Ամասիացին, լինելով վերին աստիճանի զարգացած մարդ, որը տիրապետել է մի շարք լեզուների՝ հումանիստական բարձր գաղափարների է դավանել: Նա

Հայատառ թարգմանությունները ձեռագրերը որպես կանոն հասկանալի են և հայատառ թուրքերեն լեզվից շատ չեն տարբերվում: Դրանք վարքեր են, ամուսնական դաշնագրերի պատճեններ և այլ:

56 ՄՄ, ձեռ. 5084, 1823, 3443, 6744, 8277, 8469, 8504, 9138 և այլն: Տես նաև՝ Թորգոմ արքեպ. Գուշակեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս.Նշանի վանուց ի Սեբաստիա, Վիեննա, 1961, ձեռ. 228 (Յիսուս Որդի Ներսիսի Շնորհալոյ, հայերեն և հայատառ թուրքերեն կրոնական տաղեր, 1772թ.):

57 Տաշեան Յ., Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, Վիեննա, 1895, ձեռ. 447: Տես նաև՝ ՄՄ, ձեռ. 9705, 10136: Տես նաև՝ Հ.Ներսես Վ.Ակինեան, Ցուցակ հայերեն ձեռագրաց քահանայապետ Լեոնեան հայ վարժարանի ի Հռոմ, ձեռագրեր 35(102), 61, 62, 46:

58 ՄՄ, ձեռ. 2861, 6744, 8504:

59 Անդ, ձեռ. 5084, 7868, 9073, 9643, 10061:

60 Անդ, ձեռ. 1670, 6703, 9117, 10036. 2065 (Գրիգոր Տաթևացու քարոզգիրքը):

61 ՄՄ, ձեռ. 8823, 9008, 9717:

62 Անդ, ձեռ. 2906, 6817, 7543:

63 Անդ, ձեռ. 4656:

64 Անդ, ձեռ. 517, 1670, 1856, 2861, 3476, 5043:

65 Անդ, ձեռ. 2614, 7265:

66 Տաշեան Յ., Ցուցակ հայերէն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, ձեռ. 441:

67 Քէշիշեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, ձեռ. 176 (ԺԸ դ.), Ղուկաս Փինէրոստա Յիսուսեան կարդինալի «Քիթապ, քի անտ սէօյլէնիլէր կէլէճէք օմուրտէն օթրու» (Գիրք՝ յորում ճառի գիանդերձեալ կենաց):

68 ՄՄ, ձեռ. 2065, տես նաև՝ Թորգոմ արք. Գուշակեան. Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս.Նշանի վանուց ի Սեբաստիա: Վիեննա 1961, ձեռ. 228, Յիսուս Որդի Ներսեսի Շնորհալոյ» (հայերեն և հայատառ թուրքերեն կրոնական տաղեր): Երկրեզվյան՝ հայերեն և հայատառ թուրքերեն տեքստերը հիմնականում թարգմանություններ են՝ կատարված լատիներենից, իտալերենից, արաբերենից:

69 Անդ, ձեռ. 9711:

կոչ էր անում անվերջ ինքնակատարելության, աղքատ կամ հարուստ հիվանդների նկատմամբ հավասար վերաբերմունքի: Ֆաթիհ սուլթան Մեհմեդի պալատական բժշկի «Անգիտաց անպետն» իրենից ներկայացնում է հնգալեզու բառարան՝ այդ թվում հայատառ թուրքերեն[70]: Ամասիացու ստեղծած ավանդույթները հաջողությամբ շարունակվել են հայ այլ գիտնականների կողմից[71]: Նրան փոխարինած սերնդի գիտնականների կողմից ստեղծվել են էմբրիոլոգիային, մարդակազմությանը, առողջապահությանը նվիրված հետաքրքիր գործեր, տեսական աշխատություններ: Մեծ թիվ են կազմում դեղատոմսերի հայատառ թուրքերեն ժողովածուները[72], բույսերի բուժիչ հատկություններին նվիրված ձեռագրերը[73]:

Հետաքրքրություն է ներկայացնում «Պատմութիւն գիտուոյ Ամերիկայի» ձեռագիրը[74]: Այն 1753 թվականին Հովհաննես Կեսարացին (18-րդ դ.) Երուսաղեմում հայատառ թուրքերենից թարգմանել է հայերեն՝ Կ.Պոլսո պատրիարք Հակոբ Նալյանի պատվերով:

Գիտություններին վերաբերող ձեռագրերն ի տարբերություն նմանատիպ հայերեն ձեռագրերի՝ անհամեմատ աղքատ են, ոչ միայն քանակով (մոտ 40), այլև ընդգրկման շրջանակներով:

Հանքանյութերի և բույսերի բուժիչ հատկությունների ուսումնասիրությամբ է պայմանավորված եղել ալքիմիայի զարգացումը Հայաստանում: Բազմաթիվ արհեստների, մետաղամշակման զարգացման ասպարեզում եղած հաջողություններն իրենց արտահայտություն են գտել ու արձանագրվել հայատառ թուրքերեն ձեռագրերում: Հայատառ թուրքերեն ձեռագրերում տեղ գտած քանաք պատրաստելու մասին արձանագրությունները[75], բույսերից, կենդանիներից, միջատներից բազմագույն բարձրորակ ներկեր պատրաստելու մասին նյութերը[76], նաև մեծապես նպաստել են մանրանկարչության, զարգագործական ավանդույթների լավագույնս շարունակելուն:

17-րդ դարից սկսած հանդիպում ենք քիմիային[77], թվաբանությանը[78], բրուտագործությանը, Կուտինայի արվեստին, աստղաբաշխությանը[79], գյուղատնտեսությանը[80] նվիրված ձեռագրեր: Թուրքիայի, մասնավորապես Ստամբուլի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրման համար, թուրք-ռուսական, եվրոպական երկրների հետ առևտրական հարաբերությունների, արտահանվող ու ներմուծվող ապրանքների ուսումնասիրման տեսանկյունից բացառիկ հետաքրքրություն են

70 ՄՄ, ձեռ. 8048:
71 Անդ, ձեռ. 1129, 5538, 8048, 8099, 9504, 10012:
72 Հակոբ Անասյանի «Մատենադարանի հայատառ թուրքերեն չորս բժշկարանների մասին» մի հոդվածը արաբերենից ու իտալերենից թարգմանված բժշկարաններին է նվիրված (Ստամբուլ, «Շողակաթ» հանդես, 1977, էջ 100-108). Տես նաև՝ Մատենադարանի 9711 ձեռագիրը (18-րդ դ.), որը բաղկացած է թերապիային ու ախտորոշմանը նվիրված 3 մասերից:
73 ՄՄ, ձեռ. 459, 4026, 8102, 9559, 9583, 9665, 9711, 9878, 10244, 10346, 10347:
74 Թամպուքճեան Գ., Յովհաննէս Պատրիարք Կոլոտ եւ իր աշակերտները, Ստամբուլ, 1984, էջ 162 և Ն.եպս. Պողարեան, Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Երուսաղեմ, 1966, ձեռ. 14:
75 ՄՄ, ձեռ. 459, 1387:
76 Անդ, ձեռ. 9677:
77 Անդ, ձեռ. 131, 6463, 10183:
78 Անդ, ձեռ. 524:
79 Անդ, ձեռ. 6420, 9713:
80 Արտոքէից գիր. տես՝ ձեռ. 159 (134 էջ գյուղատնտեսական ամեն տեսակ օգտակար խրատներ՝ նյութերի ցանկով 136-147 էջերում, նաև Թօփճեան Յ., Յուցակ Արմաշի վանքին, Վենետիկ, Ս.Ղազար, 1962:

ներկայացնում Կ.Պոլսի մաքսատան սակացույցները[81]: Պատմությանը վերաբերող հայատառ թուրքերեն ձեռագրերի թիվը մոտ 20 է: Դրանցից համարյա բոլորը հետազայում հրատարակվել են: Այդ թվում կարելի է հիշատակել Քյաթիպ Չելեպիի աշխատությունը[82], «Պատմութիւն Աղեքսանդր Մակեդոնացւոյ»[83], «Պատմութիւն Նադիր շահին»[84], «Պատմութիւն Լութֆիկ թագաւորին»[85], «Պատմութիւն Օսմանեան թագաւորաց», «Գուշակութիւն Օսմանցւոց թագաւորի վէզիր Բաղիպ փաշայի»[86], «Պատմութիւն Փոնցիանոսի»[87]:

Այս «Պատմութիւն»-ների մեծ մասը փաստորեն հարևան երկրների պատմություններ են:

Պատմական որոշակի հատաքրքրություն է ներկայացնում հայ չորս հեղինակների կողմից Մուլթան Մահմուդ Բ-ին, որը հայտնի է եղել իր համեմատաբար հայանպաստ քաղաքականությամբ, նվիրված 4 հայատառ թուրքերեն չափածո ներբողների հրատարակությունը Գ.Բամպուքճյանի կողմից[88]:

Հայատառ թուրքերեն ձեռագրերում պահպանվել են գործեր, որոնք շարունակում են հայ կրոնադավանաբանական գրականության ավանդույթները: Դրանց հեղինակները հիմնականում իմացել են լեզուներ, գիտակ են եղել ոչ միայն աստվածաբանական գրականության, պատմության, այլև փիլիսոփայության, անտիկ գրականության, տոմարագիտության, բնագիտության: Ուստի նրանց աշխատություններում առկա են բարոյախոսական հետաքրքիր մտածումներ, չափածո նկարագրություններ, ընթերցանության համար հետաքրքրաշարժ նյութեր: Բացի դրանից, արևմտահայ իրականությունում կրոնադավանաբանական ստեղծագործություններն ունեցել են որոշակի քաղաքական նպատակներ և կարևոր տեղ են զբաղեցրել կաթոլիկության ներթափանցման դեմ մղվող պայքարում, ստեղծելով հակակաթոլիկական դավանաբանական գրականություն: Այսպիսի ձեռագրերի թվին են պատկանում Պաղտասար Դպրի «Պատմութիւն Գրիգոր Լուսաւորիչին»[89], «Պատմութիւն Եղիայի Խարբերդացւոյ»[90], «Վարք եւ պատմութիւն ի

---

81 Անդ, ձեռ. 8015, 8016:

82 17-րդ դարի հայտնի պատմաբան Քյաթիպ Չելեպիի «Թուխֆեթ Ուլ Քիպար Ֆի Էսֆար Ուլ Բիհար» (Ծովերի մեծերին ծովային ճանապարհորդությունների մասին), որը Հովհաննես Կեսարացին 1760թ. հայատառ թուրքերեն է թարգմանել «դյուրին» կարդալու համար, Երուսաղեմ, ձեռ. 2066, 144 էջ: Տես՝ Բամպուքճեան Գ., Յովհաննէս Պատրիարք Կոլոտ եւ իր աշակերտները, Ստամբուլ, 1984, էջ 161:

83 ՄՄ, ձեռ. 6891: Հայատառ թուրքերեն թարգմանությունը կատարել է Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը:

84 Անդ, ձեռ. 2722. Ամենայն հավանականությամբ 1797 թվականի այս ձեռագիրը պատկանում է 18-րդ դարի մաստենագիր Աբրահամ Կրետացու գրչին: Նա եղել է Էջմիածնի կաթողիկոս (1734-1737թթ), մասնակցել Նադիր շահի թագադրության հանդեսին, գրել իր ժամանակի պատմությունը, ուր մանրամասնորեն նկարագրված են եղել ի թիվս մնացած իրողությունների, նաև Նադիր շահի թագավորության առաջին տարիների պատմական դեպքերը: Կարծում ենք այս ձեռագիրը մատենագրի Նադիր շահի մասին պատմող հատվածի հայատառ թուրքերեն տարբերակն է:

85 Անդ, ձեռ. 10247:

86 Պողարեան Ն., Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց. ձեռ. 14: ՄՄ, ձեռ. 2864:

87 Ներսէս Վ.Ակինեան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Հռոմի հայոց հիւրանոցի ի ս.Վկաս եւ քահանայապետ Լեոնեան հայ վարժարանի ի Հռոմ. Վիեննա, 1961, ձեռ. 35, 1798թ.:

88 Kevork Pamukciyan, İkinci Sultan Mahmud' a Dair Ermeni Harfli Dört Manzum Methiye, Ankara 1991, "Belleten", cilt LIV4 s. 211; Գ.Բամպուքճյանի բանասիրական ժառանգության անտիպ մնացած աշխատություններից է՝ Աբրահամ Անկյուրացու «Գ-ռավոմն Կոստանդնուպոլսոյ» երկի ծանոթագրությունն ու թուրքերեն թարգմանությունը (25 էջ): Այս մասին տես՝ Աբրահամեան Կարօ, «Վաղահաս ու անմոխիրիների կորուստ մը՝ Գեորգ Բամպուքճեան» 1923-1996: Անթիլիաս, «Հասկ», 1995-1996թթ, էջ 659-670:

89 ՄՄ, ձեռ. 8119, 8983: Այս աշխատանքին կանդրադառնանք հետագայում, քանի որ այն տպագրվել է:

Դաշտիկ ծաղկոցի գրոց»[91], Գրիգոր Դարանաղցու (1576-1643) երկը[92], «Գիրք պատմութեան ընդդէմ Փափապաշտից»[93], ուղերձներ[94], տաղեր Երուսաղեմի մասին[95] և այլն[96]:

Երկլեզվյա ձեռագրերի մեջ հետաքրքրություն է ներկայացնում «Տաղ վասն Թումայի վարդապետի Կոստանդնուպօլիսի պատրիարքի, որ եռուն սպանանել» պատմական տաղը, որը գրվել է 1657թ.՝ աթոռակալների միջոցով Կ.Պոլսի պատրիարք Թումա Հալեպցու սպանության առիթով[97]:

Տաղն անանուն է, գրված առաջին դեմքով՝ Թումայի անունից և նման բնույթի հայատառ թուրքերեն մեզ հայտնի միակ գործն է: Քանզի Պատրիարքը արևմտահայության հոգևոր առաջնորդն էր և քաղաքական իշխանություն ուներ, ուստի պատրիարքի Աթոռի համար միշտ էլ պայքար է մղվել: Թումա վարդապետի սպանությունն օրինակ է այս պայքարի, կաթոլիկների քաղաքականության նկատմամբ նրան վերագրվող տրամադրվածության:

Արևմտահայ պատմագրության մեջ կարևոր տեղ են գրաղեցնում այն ստեղծագործությունները, որոնք նվիրված են հայկական եկեղեցիների պատմությանը: Քաղաքներում, մանավանդ Կ.Պոլսում, հայերի կյանքը համախմբված էր հայկական եկեղեցիների շուրջը: Բազմաթիվ են եկեղեցիների ավերման, հրդեհման ու վերակառուցման մասին տեղեկությունները: Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Գրիգոր Դարանաղցու (1576-1643) «Պատմութիւն յաղագս առնելոյն տաճկաց զսուրբ Նիկողայոս եկեղեցին ի ձեռաց հայոց եւ տալոյն զկնի միոյ տարւոյ զՍուրբ Հրեշտակապետ եկեղեցին փոխանակ նորին» (էջ 5բ-10բ) և «Պատմութիւն յայլմէ վասն նոյն սուրբ եկեղեցւոյն, Գրիգոր վարդապետ կոչեցեալն Պարօնտէր, որ երբեմն էր պատրիարգ սրբոյ Երուսաղէմի յամի տեառն 1631: Նա զամենայն անցան իւր եւ զոր ինչ ետես վասն Պալատու Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյն գրեաց այսպէս»: Առաջին գործում պատմվում է 1622թ. հրդեհվելուց հետո ս.Հրեշտակապետի եկեղեցու վերակառուցման մասին: Երկրորդ պատմությունը, որ վերագրվում է նույն Գրիգոր Դարանաղցուն, գրված է, թե ինչպես թուրքերը խաբեությամբ հայերից վերցրին ս.Նիկողայոս եկեղեցին ու դարձրին մզկիթ: Այնուհետև թուրքերը հույներից վերցրին մի եկեղեցի ու մզկիթի վերածվածի փոխարեն տվեցին հայերին: Պոլսահայության 15-18 դարերի մատենագետ,

90 Անդ, ձեռ. 6891:
91 Անդ, ձեռ. 8049:
92 Անդ, ձեռ. 9704, էջ 1ա-5ա:
93 Անդ, ձեռ. 1911:
94 Անդ, ձեռ. 4494:
95 Բարգէն աթոռակից Կարապետիկոս Կիւլեսէրեան, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանին հայոց, Անթիլիաս, 1961, ձեռ. 265 և 229:
96 Երևանի Ե.Չարենցի անվան Գրականության և Արվեստի թանգարանի Թորոս Ազատյանի ֆոնդում է գտնվում Նարեկի հայատառ թուրքերեն թարգմանության ձեռագիրը, որ կատարել է Պետրոս Քյուլայանը 1904 թվականին: Թարգմանությունը կատարել է «Մանգումէի էֆքեար» թերթի վերջին հայերեն շրջանի խմբագրապետ Քասիմի (Միսակ Գոչունյանի) աշխարհաբար թարգմանությունից: Այն 538 էջ է կազմում:
97 ՄՄ, ձեռ. 7717, էջ 128-129բ: Այն առաջին անգամ հրատարակվել է մեր կողմից. թվականին ԳԱ «Արևելյան աղբյուրագիտություն» ժողովածու, Եր., 1988, էջ 83-98:

գրականագետ Արմեն Տեր Ստեփանյանը մի շարք փաստարկներով մերժում է Գ.Դարանաղցու այս երկի հեղինակ լինելը և կարծում, որ հեղինակը կարող է լինել նույն Դարանաղցու ժամանակակից Գրիգոր Կեսարացին[98]:

Հայտնի են դեպքեր, երբ սուլթանական պալատը կանխամտածված գժտություն է սերմանել կայսրության քրիստոնյա ժողովուրդների միջև: Դրա առիթները սովորաբար հանդիսացել են մի ժողովրդի եկեղեցու կամ վանքի տալը մյուս ժողովրդին: Այս քաղաքականության նպատակը մի կողմից՝ հնարավորին չափ շատ եկեղեցիներ վերցնելն էր քրիստոնյաների ձեռքից և մյուս կողմից՝ լարելով այս ժողովուրդներին միմյանց դեմ, թույլ չտալ, որ նրանք երբևէ միավորվեին սուլթանական պալատի դեմ:

Հայատառ թուրքերեն ձեռագրերից հիշատակենք նաև մ.թ.ա. 7-րդ դարում, ասորաբաբելական միջավայրում ստեղծված հազվագյուտ, հմայիչ զրական եզակի մի հուշարձանի՝ «Խիկարի զրույց»-ի հայատառ թուրքերեն տարբերակի առկայությունը: Հայատառ թուրքերեն տարբերակը ստեղծվել է թրքախոս հայերի միջավայրում՝ թարգմանվելով զրույցի հայերեն տարբերակից[99]:

«Պատմութիւն Տիմօի» լիրիկական պոեմը Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի միակ սիրային պոեմն է[100]: Սա քրիստոնյա Տիմօյի և հրեուհի Մրգատայի սիրո պատմությունն է: Պոեմի ողբերգական վախճանն իր ոճով նման է միջնադարյան ասպետական պոեմներին: Հայատառ թուրքերենով մեզ է հասել նաև «Պատմութիւն Փարէզի եւ Վենայի» միջնադարյան ասպետական ամենահայտնի և ամենասիրված ստեղծագործությունը՝ ժամանակին թարգմանված աշխարհի տարբեր լեզուներով: Հայատառ թուրքերենի է թարգմանել Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը[101]: Վերջինս հայերենից հայատառ թուրքերենի է թարգմանել «Սաղմոսք Դավթի մարգարեի»-ն (1692թ)[102], «Քիթաբ Հիքայեթի Ջհանգիր Իսքենդեր Զուլքարնեյն»[103], Ավետարանը[104]: Հայատառ թուրքերենով Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը թողել է Քարոզգիրք[105], Համառոտ Հայսմավուրք[106],

98 ՄՄ, ձեռ. 9704, էջ 5բ-10բ և էջ 1ա-5ա: Տես՝ Տեր Ստեփանյան Արմեն, Կոստանդնուպոլսի հայ գրականությունը 15-18-րդ դդ, Եր., 1985, (թեկնածուական դիսերտացիա), էջ 32:

99 «Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ», գիրք Ա, (գիտական հրատարակությունը Ա.Մարտիրոսյանի), Եր., 1969, էջ 303-325, «Ալիմ Խիկարն սոյլատիլի նասիհաթ» (գտնվում է Զմմառի վանքում, ձեռ. 413):

100 ՄՄ, ձեռ. †456, էջ 3ա-25ա: Տես նաև՝ Սահակյան Հասմիկ, Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի անտիպ մի պոեմի մասին, Եր., Բանբեր Մատենադարանի, 1962, հ. 6, էջ 409-427:

101 ՄՄ, ձեռ. 9700: Այն հետագայում հրատարակվել է հայատառ թուրքերեն, Ս.Ղազար, 1962, ձեռ. 94 Յովհաննէս Վ.Սեբաստացի «Քարոզգիրք» (1831թ.):

102 1692թ. Կեսարացի ծագումով հայ մեծ ճարտարապետ Սինանի պատվերով է պատրաստվել: Երկու ձեռագրերն է Մատենադարանում են՝ 1644 և 1645: 1645 ձեռագրի կրկնօրինակի մաքուր օրինակը գտնվում է 1715թ. հիշատակարանով հանդերձ Վիեննայում, ձեռ. 988, 101ա էջ:

103 Երուսաղեմ, ձեռ. 988, էջ 6ա-178ա: Թարգմանության թվականն անհայտ է:

104 Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ. 3, էջ 723:

105 Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան, ձեռ.408: Ձեռագիրը մինչև օրս թվում է, թե գիտնականների ուշադրությունից վրիպել է: Մասամբ հայերեն է, մասամբ՝ հայատառ թուրքերեն: 1679թ. Էջմիածնում կրկնօրինակվել է Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի «միաբան Գրիգորիս որդու կողմից»: Այն 116 էջ է կազմել: Անունը հիշատակվում է որպես՝ Բյուզանդացի Երեմիա:

106 Երուսաղեմ, ձեռ. 1076, 139 էջ: 1685թ. Էջմիածնում է գրի առնվել:

«Կտակ խաչելութեան Հիսուսի Քրիստոսի» (հայերեն և հայատառ թուրքերեն)[107], «Պատմութիւն Հայոց»[108] և Մովսես Խորենացու «Պատմութիւնը»՝ համառոտ[109]: Վերջին երկու գործերն ամենայն հավանականությամբ թուրքական շրջանակների պատվերով է կատարվել: Այս հեղինակի Երուսաղեմի սրբոց Հակոբեանց վանքի մատենադարանում պահվող գործերը հիմնականում հրատարակվել են Երուսաղեմի պատրիարքարանի կողմից[110]: Սովորաբար հայատառ թուրքերեն ձեռագրերում հանդիպում ենք հայերեն գրված մասերի: Դրանք երբեմն հայատառ թուրքերեն բնագրի թարգմանություններն են, երբեմն՝ ուղղակի հայատառ թուրքերենն ընդմիջվում է հայերենով: Հաճախ հայերեն հատվածներն արտահայտում են նախորդ՝ հայատառ թուրքերեն հատվածների համառոտ բովանդակությունը: Եթե ձեռագիրը երկլեզվյա է, հաճախ մեկ թերթի վրա տրվում են միանգամից երկու զուգահեռները, ինչպես հանդիպում ենք ավետարաններում[111], քարոզներում[112]:

Հայատառ թուրքերեն ձեռագիր բառարաններ

Մեզ հետաքրքրող նյութի հետ առնչվող առաջին օրինակը 13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի մեջ 60 մոնղոլերեն բառերի ցանկն է՝ բացատրություններով հանդերձ[113]: Այս ցանկ-բառարանը հանդիսանում է ոչ միայն հայ պատմագրության մեջ հայատառ մոնղոլերենի հնագույն գրառումը, այլև մոնղոլերեն լեզվի գոյություն ունեցող նմուշների մեջ հնագույնը: Այն մոնղոլական գրականության հնագույն հիշատակարան են համարել Էդ. Դյուլորիեն, Հ.Աճառյանը: Նրա գիտական գնահատությանն անդրադարձել է Կ.Մելիք-Օհանջանյանը:

Հայատառ թաթարերեն բառարանին 16, 17-րդ դդ. փոխարինելու են գալիս հայատառ ղփչաղերեն (կոմաներեն) բառարանները, կազմված Հունգարիայում, Լեհաստանում, Արևմտյան Ուկրաինայի քաղաքներում: Հայատառ թուրքերեն ձեռագիր բառարանների մասին թուրքական գիտական *«Tarih ve Toplum»* ամսագրում մի հոդված է տպագրել պոլսահայ գիտնական Գևորգ Քամպուքճյանը[114]:

---

107 Հայերեն և հայատառ թուրքերեն փոքրիկ գրքույկ, Վիեննա, Մխիթ. ձեռ. 408, 94ա-115բ (21) էջ: Թվագրված է 1679թ.:
108 Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1786, հ. 3, էջ 723:
109 Անդ.
110 Pamukciyan K., Eremya Çelebi Kömürciyan, "Tarih ve Tpolum", 1988, N 544-26-29 s.
111 Մատենադարան, ձեռ. 7044: Տես նաև՝ Թօփճեան Յ., Ցուցակ Արմաշի վանքին, Վենետիկ, Ս.Ղազար, 1962, ձեռ. 94, Յովհաննէս Վ. Սերաստացի, «Քարոզգիրք», 1831թ.:
112 Մատենադարան, ձեռ. 5047:
113 Կիրակոս Գանձակեցի, «Պատմութիւն Հայոց», Աշխատասիրությամբ Կ.Ա.Մելիք-Օհանջանյանի, Եր., 1961, էջ 272-7, բառարան:
114 Kevork Pamukciyan, Ermeni Harfli Türkçe Yazma Sözlükler. "Tarih ve Toplum", İst., 1986 ocak, N 25. Հայագիտության համար մեծ ավանդ ունեցող այս համեստագույն ուսումնասիրողը ժամանակ առ ժամանակ, իսկ 1980-90-ական թթ. ավելի հաճախ, թուրքական գիտական մամուլում հանդես է եկել հայագիտական հոդվածներով, որոնք այս կամ այն կերպ առնչվում էին թուրքական մշակույթի հետ: Մեղմ գրելաձևով, սակայն հիմնավոր կռվաններով համարձակվել է

Հայատառ թուրքերեն ձեռագրացուցակ կազմելու մեր ուսումնասիրությունների ժամանակ բառարանների մասին մեր նյութը համարյա կրկնապատկվել է: Վաղ՝ 16-17-րդ դդ. մեզ հետաքրքրող բառարաններ հիմնականում գտնվում են Վիեննայի կայսերական մատենադարանում[115], Մխիթարյանների միաբանության մատենադարաններում[116], Լվովում: Ձեռագիր բառարաններ կան Երևանի և այլ մատենադարաններում, Արևելքի, Եվրոպական երկրների, ԱՄՆ-ի առանձին գրադարաններում, մասնավոր հավաքածուներում:

Մեր ժողովրդի պատմական ճակատագիրն այնպիսին է եղել, որ նա ավելի շատ է կարիք ունեցել սովորելու և տիրապետելու այլ, հատկապես տիրող ժողովուրդների լեզուները և հաճախ օգտագործելու այն առօրյա խոսակցության մեջ: Դա առավել, կամ նվազ չափով վերաբերում է հատկապես արաբերենին, պարսկերենին, թուրքերենին, մասամբ նաև քրդերենին բուն Հայաստանում և վրացերեն, ղփչաղերեն, ռուսերեն, լեհերեն, հունգարերեն, ռումիներեն և այլ լեզուներին հեռու կամ մոտիկ հայաշատ գաղթավայրերում,-նկատել է մեր ժամանակի հայտնի արևելագետ Հակոբ Փափազյանը[117]:

Բառարանների առաջացումը միշտ էլ նույն դրդապատճառներն է ունեցել՝ նպաստել տարբեր լեզուներով խոսող ժողովուրդների միջև հաղորդակցությանը: Բնականաբար առաջին հերթին նկատի է առնվել սեփական ժողովրդին նոր լեզու կամ նոր հնարավորություն ընձեռնելու կարևորությունը, նրանից հետևող բազմաթիվ մեծ ու փոքր արգասաբեր առավելություններով:

Գալով բառարաններին, ապա մեզ, բնականաբար, հետաքրքրում են այնպիսիք, ուր օսմաներենն արտահայտված է ոչ թե արաբատառ, այլ հայատառ գրությամբ:

«Յամի տեառն 1772, Յուլիսի գրեցեալ եղեւ յումեմնէ աշխատասիրէ Գէորգ կոչեցելոյ Կոստանդնուպօլսեցւոյ Պալատականէ, որ զգիրքս զայս ի հայ գիր փոխարկեաց անձնաձիր տքնութեամբ, յեղեղելով զբառարանս վասն ուղիղ եւ անվրէպ առնելոյ զսա եւ վասն օգտի ընթերցասիրաց եւ լսողաց ի փառս Աստուծոյ...», - գրված է հայտնի լեզվաբան և պատմաբան Գևորգ Տեր-Հովհաննիսյանի (1736-1811) կողմից՝ Քյաթիպ Չելեպիի (Հաճի Մուստաֆա Խալիֆե) «Թազվիմիւթ Թէվարիխ» աշխատության թարգմանության առթիվ թողած հիշատակարանում

հերքել հայերի դեմ գրված հոդվածները, զգացնել տալով դիմացինների նյութի սնանկությունը, խեղաթյուրումների ու «թուրքացնելու» կանխամտածված հակումները: Գևորգ Բամպուրճյանը մեծապես հենվելով Հակոբ Անասյանի «Հայկական մատենագիտության» վրա, այս բառարանները թվարկելու համար երեք մասի է բաժանում՝ հայ-թուրքերեն, թուրք հայերեն և բազմալեզու: Նա թվարկում է ընդհանուր առմամբ 44 բառարաններ: Նկարագրությունը տես՝ Անասյան Հ.Ս., «Հայկական Մատենագիտություն Ե-ԺԸ դդ.», Բառարանագրական նիւթեր, հ. Բ, Եր., 1976, 1178-1242 էջ:

115 Ձեռ. 3. 1638-ից առաջ. 1-106ա. «Բառագիրք հայերենէ թաթարերէն», տես՝ Յ.Տաշեան, «Ցուցակ հայ ձեռագրաց Կայսերական մատենադարանին ի Վիեննա»: Վիեննա, 1891, էջ 9:

116 Ձեռ. 1131, 1613թ. «Բառգիրք» 1ա-թ, 51ա-56ա, 70բ կես էջը՝ եր. և Ձեռ. 672, «Բառգիրք», ԺԷ դ. Նկարագրությունը տես՝ Յ.Տաշեան, «Ցուցակ հայ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա. Վիեննա, 1895:

117 Հ.Փափազյան, «Մեսրոպատառ այլալեզու գրականության մասին», Բանբեր Մատենադարանի, հ. 7, Եր., 1964, էջ 210:

(Փարիզի Ազգային գրադարանի ձեռ. 317-ում)[118]:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վիեննայի Մխիթարյան մատենադարանի 3522, 3883 ձեռագրերը: Այն է՝ «Քերականութիւն ղփչաղ լեզուի»: Դրանք միաժամանակ երկսյուն բառարաններ են, կազմված ըստ «Քերականութեան» մաս կազմող բաժինների: Օրինակ. 336ա-342ա՝ «Հոլով անուանց՝ ուղղական-դողրու» և այլն: 18-րդ դ. հայ-ղփչաղերեն(հայ-կոմաներեն) բառարանի 170 էջանոց մի ձեռագիր էլ գտնվում է Հունգարիայի Գեոլա քաղաքում:

Հայատառ ղփչաղերեն(կոմաներեն), թաթարերեն ձեռագրերը ավելի վաղ օրինակներն են հայատառ թուրքերեն գրականության և հիմնականում ստեղծվել են 13-րդ դարից Արևմտյան Ուկրաինա-Լեհաստան, Ղրիմ հաստատված հայերի կողմից: Ուկրաինայում ապրող հայերի կյանքի, սովորույթների, կրոնի մասին առաջին անգամ ուսումնասիրական ակնարկով հանդես է եկել Յան Լասիցկին 15-րդ դարում: Այս և 16-17-րդ դդ. Ուկրաինայի հայոց հասարակական հաստատությունների մասին սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ հանդես է եկել Յա. Դաշկևիչը[119]: Հայատառ ղփչաղերեն բառարաններին անդրադարձել է Հ.Ամալյանը 15-17-րդ դդ. ընգրկող բառարանագրական մեր հուշարձաններին նվիրված իր աշխատություններում: Այս առթիվ կարևոր են Բ.Չուքասզյանի հետազոտությունը, Վ.Գրիգորյանի և Ա.Պիսովիչի համատեղ հոդվածները[120]:

Շատ ավելի ներշնչող թիվ են կազմում հայատառ թուրքերենի օգտագործմամբ բազմալեզու բառարանները: Հայերենի (գրաբար, աշխարհաբար), հայատառ թուրքերենի հետ բառարաններում օգտագործված հիմնական լեզուներն են՝ թաթարերենը, արաբերենը, պարսկերենը, անգլերենը, ֆրանսերենը, իտալերենը, լատիներենը, հունարենը, սլավոներենը: Այս լեզուներից շատերը ևս հայատառ են գրի առնվել:

Կան ձեռագրեր, որոնց գրելու տեղը և հեղինակը, ժամանակը հայտնի են եղել: Հայտնի է եղել նաև նրա գտնվելու տեղը, սակայն հետագայում նրա հետքը կորել է և մնացել են միայն մատենագիտական տվյալները: Այդպիսի օրինակ կարող է ծառայել Արքին Հինդոզլուի

118 Raymond H.Kévorkian; Armen Ter-Stépanian, Manuscrits arméniens de la Bibliothèque national de France, Paris 1998, p. 911-914.

119 Я.Р.Дашкевич, Ян Ласицкий и его очерк об армянах на Украине в 70-ых гг., XVI. Բանքեր Մատենադարանի, հ. 6, Եր., 1962, էջ 471-496; Я.Р.Дашкевич, Армянские общественные печати на Украине (в XVI- XVIII вв.), Բանքեր Մատենադարանի, հ. 11, Եր., 1973, էջ 471-496:

120 Անասյան Հ.Ս., Հայկական Մատենագիտություն Ե-ԺԸ դդ.: Բառարանագրական նիւթեր. հ. Բ, Եր., 1976, էջ 1220: Հ.Մ.Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները V-XV դդ. Եր., 1966: Հ.Մ.Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները XVI-XVII դդ. Եր., 1971, էջ՝ 120-126: Չուքասզյան Բարկեն, Գէորգ դպիր Պալատեցու կյանքի և գործունեության տարեգրություն. 1737-1811, Եր., Գինդ, 1994: Վ.Գրիգորյան և Ա.Պիսովիչ (Լեհաստան), Հայատառ լեհերեն վավերագրերը, Բանքեր Մատենադարանի, հ. 7, Եր., 1964, էջ 225-236: Այս գրականությունն ուսումնասիրության հատուկ ընագավառ է և զբաղեցրել է բազմաթիվ եվրոպացի գիտնականների: Գալով այս մասին թուրք պատմագրությանը, ապա թուրք գիտնական Թալաթ Թեքինը հայատառ թուրքերենի մասին գրած իր մի հոդվածում հայատառ ղփչաղերենի առաջացումը կապում է դեռևս 13-րդ դարում Ղրիմի ղփչաղական-թուրքական պետության տարածքում թուրքերի *և թուրքոր հայերի միջև սերտ հարաբերությունների, հայերի մայրենի լեզվից հրաժարված և ամբողջովին թուրքերենը սեփականացրած լինելու հանգամանքով* (ընդգծումը մերն է - Հ.Ս): Տես՝ Talat Tekin, Ermeni Alfabesiyle Türkçe, "Tarih ve Toplum", İst., 1984, N 44, s. 6-9.

(1780-1840) հայերեն-գերմաներեն-հայատառ թուրքերեն բառարանը (1840թ.): Մյուսը՝ հայերեն-իտալերեն-թուրքերեն 1726 թվականից առաջ գրի առնված, Անկարայից ոչ հեռու Կարմիր վանքում պահվող 522 էջերից բաղկացած անհայտ հեղինակի բառարանն է, որի ճակատագիրն այսօր անհայտ է[121]: Չափազանց հետաքրքիր է բժիշկ Միքայել Ռեստենի (1774-1844) Բժշկարանի 9 լեզվյա բժշկական բառարանը (Ձեռ. 164է): Այս բառարանները որպես կանոն այբբենական դասավորությամբ են:

Բառարանների մեծ մասի կազմողների անունները, ափսոս, որ հայտնի չեն: Գիտենք Սինաս վրդ. Ամերիկյանի (1827-1909), Գևորգ Տեր-Հովհաննիսյանի, Գեորգ Պալատեցի, Դիարեքիրցի Հակոբ Դպրի, պոլսեցի Հարություն դասատուի, Սահակ Կալպակչյանցի, Գրիգոր Փեշտիմալճյանցի, Չագըճեան Հ.Եփրեմի, Հակոբոս Պոզաճյանի, Միքայել Ռեստենը, Անդրեաս Շուքուրյանի, Հակոբ Փաշայանի անունները, որոշ բառարանների էլ՝ Մխիթարյան հայրերի հեղինակությունը լինելու մասին: Մխիթարյան միաբանության անդամների հավաքական հեղինակած բառարանները որպես կանոն կոթողային գործեր են և մինչև օրս էլ չեն կորցրել իրենց գիտական ու կիրառական նշանակությունը: Բարեբախտաբար դրանք, ինչպես և Մխիթարյան միաբանության գիտնական վարդապետների հետագայի աշխատությունները արժանացել են շքեղ, արժեքավոր տպագրությունների, որոնք ավելի կիրառական են դարձրել նրանց:

Կան բառարաններ, որոնք կցվել են որևէ ձեռագրի[122] կամ մաս են կազմում որևէ հիմնական երկի, կազմում առանձին գլուխներ: Այս բառարանները կոչված էին օգնելու հասկանալու հիմնական ձեռագիրը, որին մաս էին կազմում[123]: Դրանք հիմնականում այնպիսի գործեր են, որոնք գրված են խրթին լեզվով, արաբերեն, պարսկերեն դժվարամարս բառերի օգտագործմամբ: Այդպիսի գործերից է Պողոս Աղրիանուպոլսեցու «Զանազանութիւն հինգ դարուց»-ի հայատառ թուրքերեն «Պէշ տէիր ֆէրգի» գրքին կից բառարանը: Կան ուղղակի բացատրական բառարաններ՝ տարբեր ժողովածուներում[124]: Երբեմն դրանք մեկ կամ մի քանի թերթ են կազմում, այն էլ՝ որոշակի տառերով սկսվող բառերի: Ամենայն հավանականությամբ, դրանք որևէ բառարանից պահպանված հատվածներ են[125] :

Որոշակի թիվ են կազմում բժշկարաններին, դեղագրերի ժողովածուներին մաս կազմող

---

121 Ենթադրվում է, որ Կարմիր վանքի Մատենադարանի անհայտացած ձեռագրերը գտնվում են Անկարայի պետական գրադարանում:

122 Երևանի Մատենադարանի 1798թ. մի Երազահանի վերջում (Նոր ձեռագրերի հավաքածու, ձեռ. 160) գտնում ենք 1826թ. հայատառ ռուսերեն և հայատառ թուրքերեն բառարան՝ 323 գործածական բառերի:

123 ՄՄ, ձեռ. 2906, «Վեցհազարեակ» հայերեն և հայատառ թուրքերեն: 20բ-22բ՝ բառարան աստղագուշակից օգտվելու համար և Էջմիածնի Վահարանի մատենադարանի ձեռ. 82. Ապտի Ռահմանի Թէպրիզեցւոյ «Բանալի Աստեղաց». 92բ-96ա. Բառարան՝ ձեռագրում գործածված արաբերեն, թուրքերեն և պարսկերեն բառերի հայերենները:

124 ՄՄ, ձեռ. 3869, 118ա-47բ՝ հայերեն և հայատառ թուրքերեն խառը բացատրական բառարան և 147ա-73բ՝ հայատառ ֆրանսերեն-հայերեն և հայատառ թուրքերեն բառարան: Տես՝ ՄՄ, ձեռ. 3690:

125 ՄՄ, ձեռ. 5373, 99ա, միայն Գ և Դ տառերով սկսվող բառերի բառարան հայերեն-հայատառ թուրքերեն բառարան:

- ՄՄ, ձեռ. 6577, Էջերի դատարկ մասերում տեղ է գտել հայատառ արաբերեն-հայերեն-հայատառ թուրքերեն բացառության մի բառարան, որը հետագայի հավելագրություն է:
- ՄՄ, ձեռ. 9559, 250ա՝ Բառարան միայն Ա տառով սկսվող բառերի, թերի:

բառարանները[126]: Դրանք նաև հիվանդությունների, դեղատոմսերում օգտագործվող նյութերի տարբեր լեզուներով, գիտական տերմինների բառարանների արժեքավոր օրինակներ են[127]:

***

Մեր ձեռագրացուցակում տեղ են գտել նաև մի քանի հայատառ ղփչաղերեն ու հայատառ թաթարերեն ձեռագրեր: Պատճառը նախ այն է, որ դրանք հայատառ թյուրքական լեզուներով գրված ձեռագրերի մի տեսակն են, ստեղծված ղփչաղական, թաթարական տիրապետության տակ գտնված հայերի կողմից, որոնք գաղթել էին Արևմտյան Ուկրաինա, հյուսիսային մերձսնծովյա շրջաններ, Մոլդավիա, Ղրիմ, Լեհաստան, Հունգարիա, եվրոպական մի քանի այլ երկրներ: Այս գաղթերի մասին վկայություններ կան դեռևս 15-րդ դարից: Մյուս պատճառը՝ տարբեր շրջաններում, մինչև օրս այս գրականության նկատմամբ շարունակական ոտնձգությունները կանխել փորձելու հույսն է:

Այս գրականությունը ստեղծվել է հայերի կողմից, զուտ հայկական բովանդակություն ու բնույթ ունի, ծառայել է հայերին և հայ մշակույթի մի անքակտելի մասն է կազմում:

Մինչ օրս մի շարք թուրք, եվրոպացի, միջինասիացի գիտնականներ փորձում են այս գրականությունը ներկայացնել որպես քրիստոնեացած, հայացած ղփչաղների, թաթարների գրականություն: Փորձում են այն ներկայացնել նաև որպես այն հայերի գրականությունը, որոնք «կամովին» թողել են իրենց հայկականությունը, ձուլվել, դարձել ղփչաղ(պոլովցի) ժողովրդի մի մասը, ստեղծագործել հայերեն տառերով, սակայն ղփչաղերենով, թաթարերենով (վերջիններիս միայն բանավոր լեզվի գոյության պատճառաբանությամբ): Առաջին տեսակի գիտնականներից է Ա.Գարկավեցը, իսկ երկրոդ խմբից է՝ թուրք գիտնական Թալաթ Թեքինը: Այս մասին մենք չենք ուզում առանձին անդրադարձ կատարել, քանի որ հայտնի գիտնական Յարոսլավ Դաշկևիչը իր զորձունեության մի հսկա մասը նվիրել է այս բնագավառի մանրամասն ուսումնասիրությանը, ապացուցել հայատառ ղփչղերեն ու հայատառ թաթարերն ձեռագիր գրականության հայ ժողովրդի կողմից ստեղծված լինելու, իր ժողովրդի կյանքի ամենատարբեր կողմերին ծառայելու ու դրա արտահայտությունը լինելու, հայկական մշակույթի մի մասը կազմելու անհերքելիությունը: Գալով վերոհիշյալ գարկավեցների, կլոուսենների և այլոց այս գրականությունը թյուրքական

---

126 ՄՄ, ձեռ. 9583, 203ա 251բ՝ բառգիրք թժշկարանի:

- ՄՄ, ձեռ. 9789, Անուանք կենդանակերպից արաբերէն, թաթարերէն, պարսկերէն, թուրքերէն, հունարէն: Անուանք մոլորակաց արաբերէն, թուրքերէն պարսկերէն, հունարէն.: *Բոլոր լեզուներն էլ գրի են առնված հայատառ:*
- ՄՄ, ձեռ. 10661, Հեքիմարան, 64ա-71բ՝ Բառարան 212 դեղատոմսերում օգտագործված նյութերի՝ այբբենական կարգով:
- ՄՄ, ձեռ. 10912, Թժշկարան, 16ա-17բ, 170ա-182ա՝ Բառարան հիւանդութեանց կամ անուանք հիւանդութեան՝ այբբենական կարգով: 280բ-281բ՝ Ցանկ քանի մը մամուռնից՝ Ա-Թ և Մ տառերը:

127 ՄՄ, ձեռ. 9697, «Արուեստարանութիւն» (Քիմիա) հայերեն և հայատառ թուրքերեն երկլեզու ձեռագրին կից տերմինների գործածության բառարան՝ 126ա-8բ:

- Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարան. Ձեռ. 1388, «Գիտական բառարան հայերէն-թուրքերէն-ֆրանսերէն», 1901, Կ.Պոլիս, էջ 216:

ժողովուրդներին ու թյուրքական մշակույթին վերագրելու սին ջանքերին, Յարոսլավ Դաշկևիչը համարում է «հնարովի, կեղծիքների վրա խարսխված տեսություն, լիովին կտրված 16-17-րդ դդ. սկզբնաղբյուրներից, որոնց մեջ ամենևին չեն հիշատակված «հայ-ղփչաղները», որը և չի կարող դիմանալ որևէ քննադատության: «Ընդհակառակը, 15-17-րդ դարերի բազմաթիվ հեղինակներ, որոնք գրել են Լեհահայ գաղութում եղած լեզվական կացության վերաբերյալ, վկայում են, որ երկար տարիներ Ղրիմում ապրելով ղփչաղների մեջ, հայերը սովորել էին նրանց լեզուն և Ուկրաինա գաղթելուց հետո շարունակում էին խոսել ղփչաղերեն, 16-րդ դ. 20-30-ական թվականներից այդ լեզվի համար օգտագործելով հայերեն տառերը, ստեղծելով բազմաժանր գրականություն: Ղփչաղախոս հայերի հետ միասին այդ գաղութներում ապրում էին հայախոս, իսկ հետագայում լեհախոս հայեր, որոնք բոլորը միևնույն՝ հայկական համայնքի անդամներ էին»[128], իրենց ընդգծված ազգային նկարագրով, սովորույթներով, ավանդույթներով, օրենքներով: Այս մասին մի շարք կարևոր աշխատությունների ու հոդվածների լվծվցի հեղինակ, հայտնի գիտնական Յարոսլավ Դաշկևիչը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ ոչ մի հիմք չկա խոսելու իրականության մեջ գոյություն չունեցած «հայ ղփչաղների» մասին, իսկ ինչ վերաբերում է հայատառ ղփչաղերեն նյութերին, ապա դրանք իրավմամբ համարվում են հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը:

Այստեղ գաղթած հայերը (Անիից՝ սկսած 10-րդ դարից, Պարսկաստանից, Օսմանյան կայսրության տարբեր գավառներից) խոսում էին միմյանց դժվար հասկանալի բարբառներով: Պարզ ղփչաղերենը, որ հասու էր նրանց բոլորին, կարող էր դյուրացնել նրանց հաղորդակցությունը, դառնալով «միջնորդ» լեզու բոլորի համար: Իհարկե, չմոռանանք նշելու, որ հայերի կողմից այս լեզվով ստեղծվել են ձեռագրեր, որոնք հազվագյուտ նշանակություն ունեն ղփչաղագիտության համար: Այսպես օրինակ, շնորհիվ հայերի, գոյություն ունեն ղփչաղերենի ծավալուն քերականություններ, իսկ Լուսիկ քահանայի գործն իր տեսակի մեջ եզակի աշխատություն է[129]:

Հետաքրքիր է ձեռ. 3521-ը, 1609թ. Ծերիկ դպրի որդի Նիկոլի կողմից գրված: «Թեոդոսի կայսեր Թուղթ առ Դիմոսկորոս» (նեստորականների, հերձվածողների, Քաղկեդոնի ժողովի մասին):

---

128 Այս ամենի մասին տես՝ Ярослав Дашкевич, Кто они-"Армяно-Кыпчаки?" (Об этносе создателей армяно-кыпчакских рукописей 16-17вв.). Բաներ Մատենադարանի, Երևան, 1994թ, հ. 16, էջ 58-110.
Հայատառ թաթարերեն ձեռագրեր տես՝ Վիեննայի Կայսերական մատենադարանի ձեռ 13(1580թ.) և ձեռ. 3(1638թ.): Տես նաև՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռ. 468 (1575թ.), 559 (1583թ.), 446(1608թ.), ձեռ. 525 (1618թ.), ձեռ.447(1643թ.), 479(1660թ.), 480(1661թ.), 536(ԺԶ),ձեռ 1300(ԺԸ), 1609(ԺԸ) և այլն:
Կամենեց-Պոդոլսկում և մյուս մշակութային հայկական կենտրոններում գրի առնված և տպագրված հայատառ ղպչաղերենով (հին թաթարերեն) մեծ թվով գրականություն է պահվում Ուկրաինայի, Լեհաստանի արխիվային ֆոնդերում: Հայատառ ղփչաղերեն ձեռագրեր տես նաև՝ Փարիզի Ազգային գրադարանի 1568թ. Լվովում գրված դատաստանագիրք Լէոպոլտի Հայոց ձ.176 և ձ. 194 Ժողովածոյ (Ուկրաինա, 17դ. կեսեր): Ձեռագիր մատյանները:
129 ՄՄ, ձեռ 3522. Քերականություն ղփչաղ լեզուի. Լվով, 1634թ. 353 թերթ և ձ. 3883, Բառք քերականական, ԺՁդ., 383թերթ, ձ. 3521 «Թուղթ առ Դիոսկորոս» (1609թ, 220 թերթ) և այլն:

***

Հայատառ թուրքերեն ձեռագիր գրականությունը մինչև օրս արժանի և անհրաժեշտ ուշադրության չի արժանացել ուսումնասիրողների կողմից: Հուսով ենք, որ Ձեռագրացուցակների հրատարակությունը մասամբ կլրացնի կարևոր այս բացը:

Որպեսզի ընդհանուր պատկերացում կազմվի այս գրականության մասին, հարկ է ձեռնարկել այս ձեռագրերի գիտական, քննական ուսումնասիրության և հրատարակության կազմակերպումը: Հայատառ թուրքերեն ձեռագրերի հրատարակությունները, բնագրերի քննական ուսումնասիրությունները հետաքրքիր արժեքների ու բացահայտումների, այս հարուստ ու եզակի ժառանգության վերագնահատումների առիթ կտա, կպահպանի այն միտումնավոր ու տգետ ոտնձգություններից:

ԿԱԶՄՈՂԻ ԿՈՂՄԻՑ

Այս ձեռագրացուցակի առաջին հատորը ներկայացնում է Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի՝ Մատենադարանի, և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Վեհարանի մատենադարանի հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նյութերը և հայատառ թուրքերեն՝ 404 ձեռագրերը: Հուսով ենք, որ մյուս հատորները կներկայացնեն Մխիթարյան միաբանության Վենետիկի ու Վիեննայի, Կ.Պոլսի, Երուսաղեմի, Անթիլիասի, եվրոպական գրադարաններում ու մասնավոր այլ կարևոր հավաքածուներում պահվող հայերեն ձեռագրերի հայատառ թուրքերեն նյութերն ու հայատառ թուրքերեն ձեռագրերը:

Ձեռագրացուցակը կազմված է հիմնականում Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանի կողմից 1984-2006 թթ. հրատարակված ձեռագրացուցակների նմանողությամբ:

Հայատառ թուրքերեն ձեռագրերն ու նյութերը ներկայացնելիս նկատի ենք ունեցել հետևյալ հարցակարգը.

1. Թիւ (N)
2. Խորագիր (անվանում)
3. Քանի՞, ինչ՞ լեզվյա է
4. Ժամանակ
5. Տեղը
6. Թուղթ (թերթաքանակ)
7. Գրիչ
8. Կազմող
9. Թարգմանող
10. Պատվիրատու, ստացող
11. Թերթք (պրակներ)
12. Գրութիւն (միասյուն կամ երկսյուն)
13. Դատարկ (թերթեր)
14. Հիշատակագրութիւնք
15. Տեղեկութիւնք
16. Բովանդակութիւն

Նկատի են առնված բնագրերի գլխավոր խորագրերը, ենթախորագրերը, սկզբնատողերը, վերջին բառերը՝ հատուկ համարակալմամբ և համապատասխան էջերի նշումներով: Անհրաժեշտության դեպքում տրված են ամփոփ ծանոթագրություններ:

Այս ձեռագրացուցակը չունի «Մայր ցուցակ»ների հարցակարգի հարստությունը: Պատճառը՝ «Մայր ցուցակ»ներում հիմնական ձեռագրերի նկարագրությունների առկայությունն է: Այստեղ հիմնական շեշտը դրված է հայատառ թուրքերեն նյութեր և ձեռագրեր ներկայացնելու հնարավորությանը:

Գալով բովանդակության նկարագրությանը, ելակետ է ընդունված հայատառ թուրքերեն բոլոր առանձին նյութ-միավորների հնարավորինս լիարժեք ներկայացնելու սկզբունքը:

Բնագրային հետագա լրացումները նկարագրվում են որպես հավելեզրություններ:

Հեղինակների կամ թարգմանչի, գրչի հայատառ թուրքերեն հիշատակարաններից մեջբերվում են սկզբնատողերը:

Գրչագործների առավել ուշագրավներն ընդօրինակվում են:

Նույն կազմի մեջ, նույն համարի տակ հանդիպող տարբեր ժամանակներում տարբեր գրիչների կողմից ընդօրինակված տարբեր ձեռագրերի նկարագրությունը կատարվում է նույն համարի տակ, ներկայացնելով ամեն մի միավորն առանձին: Միմյանցից տարբերելու նպատակով հետևել ենք այդ ձեռագրերին ենթահամարներ տալու ընդունված սկզբունքից (Ձեռ. Ա, Ձեռ.Բ և այլն):

Ձեռագրացուցակում ներկայացված մատենագիտական օժանդակ ցանկերը կօգնեն մասնագետներին հնարավորինս դյուրությամբ գտնելու իրենց հետաքրքրող տվյալները:

Ձեռագրացուցակն ունի գրչության ժամանակագրական ցանկ, նյութերի ցանկ, գրչութեան վայրերի ցանկ, անձնանունների ցանկ, ձեռագրերի ընդհանուր տախտակ:

Օգտագործված ուղղանկյուն և կլոր փակագծերի օգնությամբ կատարված են լրացուցիչ ճշտումներ, միջամտություններ:

Ձեռագրերի ընդհանուր տախտակները կազմելիս հնարավորինս խուսափել ենք մատենագիտական որոշ տվյալների (խորագիր, ենթախորագիր, սկզբնատողեր և այլ) անհարկի ընդարձակությունից և այն ներկայացրել ենք կրճատ:

Կետադրության, մեծատառերի օգտագործման հարցերում հետևել ենք Մատենադարանի ձեռագրացուցակների համանման սկզբունքներին:

Ցեռագրացուցակում անձանունները տրվել են շեղագիր, չլուծվելու համար հիմնական տեքստի հետ, քանզի այդ անունների մեծ մասը իմաստային բովանդակություն ունի և կարող էր ընկալվել որպես հերթական պարզ բառ:

Այս ձեռագրացուցակն իր նյութի առումով առաջինն է: Մինչ այդ հայատառ թուրքերեն նյութերը ձեռագրացուցակներում արտահայտվել են մակերեսորեն, երբեմն էլ բոլորովին չեն

ներկայացվել: Այս բացթողումը թույլ չի տվել մոտավոր պատկերացում կազմել անգամ հայ ձեռագրական մշակույթի, հայ մշակույթի մի կարևոր, ինքնուրույն հատվածը կազմող հայատառ թուրքերեն նյութերի ու ձեռագրերի շուրջ: Մինչդեռ այն անգնահատելի մի հարստություն է, որը նույնքան արժանի է խորը և բազմակողմանի ուսումնասիրության՝ ինչպես մեր ժողովրդի մտավոր յուրաքանչյուր ստեղծագործության արտահայտություն:

Հայատառ թուրքերեն ձեռագրացուցակը կազմելիս մեզ մեծապես օգնել են Մատենադարանի և Մայր Աթոռ Ս.Էջմիածնի Վեհարանի գրադարանի աշխատակիցները, որոնց մեր հատուկ շնորհակալությունն ենք հայտնում:

Մենք երախտապարտ ենք Մատենադարանի գլխավոր ավանդապահ Գևորգ Տեր-Վարդանյանին իր արտակարգ սիրալիր ու մասնագիտական աջակցության համար:

Երախտապարտ ենք մեր խմբագիրներին, ճանաչված մատենագետներ Արմեն Տեր-Ստեփանյանին և Գևորգ Տեր-Վարդանյանին, իմ ուսանողական դասընկերուհի, թուրքագետ Ռուզաննա Լուսպարյանին:

Կրճատումներ և հապավումներ

Կոչումներ, առանձին բառեր

Աբդ -աբեղա
Բվնդ. - բովանդակություն
Գլ. - գլուխ
Դ. -դար (դդ. -դարեր)
Եպս. -եպիսկոպոս
Արքեպս. -արքեպիսկոպոս
Թրգմ. –թարգմանություն, թարգմանիչ
Թ. –թվական (թթ. –թվականներ)
Ծանոթ. –ծանոթություն
Կթղ. –կաթողիկոս
Կր. –կրոնավոր
Հշտկրն –հիշատակարան
հթ – հայատառ թուրքերեն
հ – հայերեն
ձեռ. –ձեռագիր
ղփչ. – ղփչաղերէն
Մտտ. –մահտեսի
Յավ.- հավելագրում
ն –ՄՄ ձեռագրական նորագույն հավաքածու,
Պրն –պարոն
Սրկ. –սարկավագ
ս. –սուրբ
Է – Մայր Աթոռ ս.Էջմիածնի ձեռագրեր
Վրդ. –վարդապետ
Տրց – տիրացու
Քհյ –քահանայ
ա.թ.-առանց բառերի (նոտագրված ձեռագրերում)

ՅՈՒՅՑԱԿ ԵՐԵՒԱՆԻ ՄԱՇՏՈՑԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԷՆ ՆԻՒԹԵՐԻ ԵՒ ՀԱՅԱՏԱՌ ԹՈՒՐՔԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ

41
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԸդ., (1743ից առաջ), 163 թերթ: Բաղկացած է 3 տարբեր ձեռագրերից:
Բվնդ. Ձեռագիր Գ. 35 թերթ (129-163). [Տաղք հայատառ թուրքերէն՝ *Եաղուբ Օղլի, Յովհ. Հալէպցի, Ըստամպօլցի Քօմուրճիքատայ Երեմիեայ*]:

1. 133բ-5ա «Տաղ ի վերայ սուրբ Յարութեան ասացեալ» - Պաղ դիայմայ[թ] դափուսընայ վարինճայ, / Այթի ամուտ կօրտրդ սաղի սօլինճայ... (նախավերջին տող) *Եաղուպ-օղլի* սէնըն պագ կունահրն չօգ...
2. 135ա-6ա «Տաղ ի վերայ ս. Աստուածածինին, *Հալեպցի տէր Յովանէսի* ասացեալ»: Ֆէլէկին գունն է - Ով գեղեցիկ կոյս, տալիթա Մարիեամ, / Մուպարաք եւզուի կօստար, հէսրաթ էմ... / Թվին հազար հարիւր եւ ԺԸ.-ուն (1669), *Օվանէս քէշիշ* դուլընտրդ, էյ խաթուն:
3. 136ա-7ա «*Ըստամպօլցի Քօմուրճիքատայ Երեմիեայի* ասացեալ է ի վերայ սուրբ Աստուածածնայ». Ֆէլէկին գոյնն է - Երանեալ կոյս, սուրբ տալիթայ Մարիեամ, / Բուն փաք վէ ուրուքէրի սուլթան... / Սիզայ եասիր կեռտայ *Քօմուրճիքատէ:*
4. 163ա [Տաղ երկլեզուեան] - Ես գնացի օտար աշխարհ, / Գոնլիում չօք՝ բաշտան աչար, / Չունիմ դատաստանին պաշար, / Բանի... (այսքան):

131
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԹդ., (1781ից յետոյ), 93 թերթ: Բաղկացած է 2 տարբեր ձեռագրերից:
Բվնդ. Ձեռագիր Բ. Քիմիական գիտութեանց վերայ տեղեկութիւնք:

1. 60բ-90ա Ռէմի եւ քիմիական գիտութեանց վրայ տեղեկութիւնք են հետեւեալ, այսինքն՝ առաջիկայ թուրքերէն գրութիւնն - Կիպի պու հիմէթ էվելա պուրումիզտէն իւշ տիրիէմ սու չգար դայտէ: Պին եզիտէ, անտէն ճաֆէր ատգա, անտէն ճապիրէ, / Անտէն բազի հազրէթլէրինէ, անտէն իպն իմշհասր...

362
ԱՒԵՏԱՐԱՆ

1656 թ., 142 թերթ.

1. Պահպանակ Աբ (ԺԸդ. տող, յաւելագրութիւն հետագայի՝ 21 տող): «Սուրբ Կարապետի գովասանք է, Աստուծոյ է» - Այ աղայլար, բօկուն բան բիր գօնայ էլայդում, / Դարդումն բիրի...

452
ԺՈՂՈՎԱԾՈՅ

ԺԸ-XVIII (1797ից առաջ), Գրիչ՝ Մանուէլ՞: Ստացող՝ Զաքարիա վրդ. Էջմիածնցի՞: 73 թերթ.
Բվնդ. Բառգիրք, պատմութիւնք, ոտանաւորք: Ի Սուրբ Գրոց (և եւ հբ.):

1. 9ա-30ա Համահաւաքումն [տաճկերէն] բառից՝ համառօտ լուծմամբ ըստ դասաւորութեան այբբէնական կարգի... [Ա-Ֆ]. - Ա. Ազիլ, իխրէտմէնտ, ազրլի՝ մտացի, խելացի... ֆէհմ ու ֆիրասէթ՝ խոհեմութիւն:
2. 30ա-1ա Յաղագս բառից ոմանց մնացորդաց - Այա, էյ ատէմ, իյ ատէմ ով մարդ... Տատ ֆէրեատ՝ աղաղակ (այսչափ):
3. 31ա-2ա Այս բառերս արապէրէն կամ պարսից կամ տաճկաց կամ հայոց՝ այլ քանի մի մնացորդներ - Քեօթրում անդամալուծ... Մէն, քի ասիմանտէսին՝ որ երկինս ես:
4. 31բ-2ա Քանի մը սաղմոս տաճկերէն գրեմ քեզի (քաղուածոյ) - Ալլահրն քէրէմի իլէ եէր տօլտի...
5. 32ա Գործք մի յառաջ բերելոյ պիտոյ է

նմա - ա.Գ-ուվէք (ոյժ), բ. Իլմ ու ագլ (գիտութիւն և խելք), գ. *ա*[ի]ռատէք (կամք)...

6. 33ա Տէրունական Հայր մէրին: Տուայի իլահիյէտիր - Աքամրզ, քի սիմատէսին...
7. 33բ-40բ [Պատմութիւնք ի Հարանց Վարուց]
8. 33բ-4ա [Յաղագս Մարիամու Աստուածածնի]: Պէրայի հազրէթի Մէրիէմ վալիտէի Մէսիուլլահ: Իպրէք պիրինճի - Պիր թասվիրճի սէնաաթինէ մահիր վէ իւսթատլիմ...
9. 34ա-բ Յաղագս ազահութեան: Պէրայի թամահքեարլըգ: Էլամէք պիրինճի - Պիր պայ տէվլէթի հալի հայաթինտէ...
10. 34բ Յաղագս աղօթից: Պէրայի տուաի ու համտ ու սէնա: Իպրէք պիրինճի - Տուաէ այչագ կեօճիլլիւք...
11. 34բ-5բ Յաղագս անզղջութեան: Պէրայի թէօպէսիզլիք վէ իսթիղվարսըզլըք իպրէք պիրինճի - Թէօպէ ու իսթիղֆար տըր ճիւրմին թանըմագ...
12. 35բ-6ա Յաղագս անհնազանդութեան: Էմրմիւթի օյմագ պէյանինտէ տիր - Ճգնաւորլարըն պիրի թենպիհէնիպ...
13. 36բ-7բ Յաղագս ապաշխարութեան - Պէրայի թեօպէի իսթիղֆար խրսրզըն պիրի խասիմէրինէ բասթ կէլիպ...
14. 37բ-8ա Յաղագս նախանձու: Պէրայի հասէտ - Պիր ճինլի դայէթ սրգլէթ չէքիր իտի... Իպրէք իքինճի. Պունուն աքսինէ Բարսեղ Կէսարացի պիր մանաստիրէ կիտուպ, պիր կէնճ ուսուլլու ուշաղի մէտի իթտիլէր քի...
15. 38բ-9ա Յաղագս ուխտատեղեաց: Զիեարէթ կիւնլէր փաքլէնտի - Տէվլէթլի սոյունտէն պիր տիլ էպի տէօշէկէ հիշիպ...
16. 39ա Յաղագս բարկութեան: Պէրայի խշմ ու թահվէր - Կիւրոս Աճէմ շահի Պաղտատ իւզէրինէ վարտի...
17. 39բ Վասն արգիլման պատճառաց հպարտութեան: Մաղրու(ր)լուգ սէպէպնին մէն իլամէք -*Արիստոտել* տէմիշ քի, պիր քարրն ուշավուզ...
18. 40ա-բ Վասն քն[ն]ութեան: Պէրայի արամաք իրտէմէք - Օգոստինոս բահպանլէրին սէրվերի սուրբ Երրորդութիւն...
19. 40բ Յաղագս Խաղալոյ Պէրայի գումարպազի իստիսղալ - Պիր գումարպազ թավլու օյնար իտի...
20. 40բ Յաղագս գոհանալոյ ի հիւանդութեան: Պէրայի խասթէիքտէ շիւքր իթմէք - Տախի պիր տէրտ ճէնկճի օրմանլըգ իշինտէն...
21. 42բ-3բ Հայր Մեր աղօթքը հայերէն, հթ և հայատառ լատիներէն.
22. 45ա-6բ *Յոհան Ոսկիաբանէ* ասացեալ և տիրացու լուսահոգի *Պաղտասարէ* ոտանաւորեալ - Այրն՝ աստուած է օրինակ, ուսուցանէ մեզ համար... (Այրուբենի ամեն մի տառը՝ 2 տողից բաղկացած ոտանաւոր է հթ, վերջինը՝ հայերեն է. 34-րդ ոտանավորին հաջորդում է 36-ը: 35-ը՝ չկա):
23. Գ. 47ա-58բ [Տաղարան հթ]: 47ա Ոտանաւոր Աթա ու վալիտէ իւզրէ - Էպը կիպի կէլ պահիրտէն չէք ապի, / Ապի խօշ էթ օլ պուլուտէ սէն թապի...
24. 47ա-բ Իքինճի ոտանաւոր Եարան ու տինտաշինի նէֆսին քիպի սէվէսին - Կէլ ազիզիմ եարի սատիգ, պիլ հագի, / Տէրուտէն սէվ, պիր ֆէրտ գօ[յ]մա հիչ պագի...
25. 48ա Ոտանաւոր աշգի հագ մուհապէթի վերայ - Աշգի հագգէ կէլ էմին օլ, էյ փիւսէր, / Ըշգի հագգէ գատր իսթէմէզսէն էկէր...
26. 48բ Ոտանաւոր արգ ու շէհվէթ իւզէրինէ - Նէֆսի արգու իլէ նագար էթմէ կէլ, / Իլ մալ իչիւն ճան ու պաշլէ ենթմէ կէլ...
27. 49ա Փէնտնամէ գինա ու ֆրսք իւզէրինէ - Պէրայի հագտէն քիմ իճտինապ չէքմէտի, / Ապի թուֆան անկա ֆայտէ իթմէտի...
